ԱՐԱՐԱՉ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ,
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Ե. ՏԱՐԻ ԻԳ. ՄԱՅԻՍ 31

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ սրբալոյս Մխիթարայ . 225
ԿՐՕՆԱԿԱՆ· ՍՏՐՈՒԿ Ոսկեբերան . . . 226
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ յուշատետրն (Շարունակելի) Ս. Մանդինեան . . . 243
ԿԱՐՕՒ վիճակի հնութիւններուն մասին (շարունակ. և վերջ). Յ. Վ. Մ. . . 254
ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ նկատողութիւնք· (շարունակելի) Ֆայքեփռանի . . 265
ԱԶԳԱՅԻՆ· Ա. յոյներէն Նէստօրի Իշխան Վիկտոր Եմմանուէլի ի Մայր Աթոռս . . 273
Հաշիւ Կուկիոյ Ս. Աստուածածնին եկեղեցւոյ ուսումնարանին Տվինայ . 279
Հաշիւ Նոր-Բայազիտ քաղաքի ուսումնարանաց 381
ՊԱՇՏՕՆԱԿԱՆԵՐ· 284
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ·

ՌՅԼԹ—1890

ՅՈՒՅԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ·

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ·

Այրիվանք կամ Գեղարդավանք·	— 10
Աստուածպաշտութիւն Հայաստանեաց եկեղեցւոյ	— 70
Արարատ Ամենայիր տարեկան ամիսղջ կաղմիալ·	2 —
Աւետարան Համաբարբառ վկայութեամբ	— 80
Բէնիամին Տրանկլինի կեանքը	— 20
Գիրք Հանդիսականարութեանց կայսերական տօնից	— 50
* Գոհաղիա ողբերգութիւն	1 —
Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի	3 —
Դաշնագիր	— 10
Դասագիրք բաղդատական Աշխարհագրութեան	50
Դասագիրք Ընդհանուր պատմութեան·—Հին դարուց	— 50
Նոյն·—Միջին դարուց	— 50
Դասագիրք Քրիստոնէական Հաւատոյ· Արէլ Եպիսկոպոսի	— 10
Դասագիրք Քրիստ· վարդապետութեան Գ· Ե· Ա յվազեան	— 10
Դպրոց տարեկան 1874—76	2 —
* Եօթն խօսք առ տղայս	— 20
* Թուաբանութիւն զարգացելոց Ա· Գալֆայեան	1 —
* Ժամագիրք տունի	8 —
Ժամագիրք ձեռաց	2 —
* Լսարան Աւագ ուրբաթ	— 10
* Լսարան Կ· Պօլսոյ	— 10
* » Արև	— 10
* » Ջատիկ տեառն	— 10
* » Երկինք և երկնայինք	— 10
* » Հոխխիմէ	— 10
* » Հնութիւնք Եգիպտոսի	— 10
* » Մեծն Ներսէս	— 10
* » Ս· Խաչ	— 10
* » Տօն Ծննդեան	— 10
* Խանգարմունք Հայկաբանութեան	— 20
Կաթուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ	— 20
Կանոն աշակերտաց Գէորգեան Ճեմարանի	— 5
Կանոն ընկերութեան Հայոց Ճաւայի	— 10
Կանոն ծխական Դպրոցաց	— 20
Հանդէս Գ· տարեգարձի Գէորգեան Ճեմարանի	— 10



Ա Ր Ա Ր Ա Տ

Թիւ ե. — ՇԲՋԱՆ ԻԲ. 1890 ՏԱՐԻ ԻԹ. ՄԱՅԻՍ 31

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՕՆԻ

Ներկայ 1890 տարւոյ Սեպտեմբ. 30ին ի տօնի Վարդայ Ս. խաչի՝ ըստ յաջողելոյ Տեառն Ընտուծոյ՝ Վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. ՄԱԿԻՐ մուտք արեալ է Ս. Միւռօն օրհնել:

Ս. Միւռոնի օրհնութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրական արարողութիւններից առաջինն լինելով, Վեհ. Հայրապետը բարեհաճեցաւ կանխաւ ի լուր ամենեցուն հրատարակել, որպէս զի ցանկացող բարեպաշտ հոգևորականք և աշխարհականք ըստ նախնի սովորութեան ի ժամանակին ժամանեն ի Մայր Էջմիածին և վայելեն Ս. Միւռոնի օրհնութեան շնորհը:

ԿՐՕՆԱԿԱՆ

ՍՏՐՈՒԿ ՈՆԵՍԻՄՈՒ

Խնդութիւն յոյժ ընկալայ, և մխիթարութիւն ի սիրոյն քոյ. զի գութք սրբոց քև հանգուցեալ են, եղբայր։

Վասն որոյ բազում համարձակութիւն ունիմ ի Քրիստոս՝ հրաման տալ քեզ զարժանն վասն սիրոյ, մանաւանդ թէ աղաչեմ իսկ այնպիսի լինել՝ որպէս և Պաւղոս ծերացեալ, արդ և կապեալ ևս Յիսուսի Քրիստոսի։ Աղաչեմ զքեզ վասն որդւոյ իմոյ՝ զոր ծնայ ի կապանս իմ զՈնեսիմոս, որ երբեմն անպիտան էր քեզ. բայց արդ քեզ և ինձ պիտանի, զոր յղեցի առ քեզ, և դու զդա ընկալջիր, այսինքն է՝ զիմ աղիս։ Զոր կամէի առիս արգելուլ՝ զի ընդ քո ունիցի ինձ սպաս ի կապանս Աւետարանին. բայց առանց քո կամայ ոչինչ կամեցայ առնել, զի մի բարիքդ քո ի հարկէ լինիցին, այլ կամաւ։ Եւ թերևս վասն այնորիկ մեկնեցաւ առ ժամանակ մի, զի յաւիտեան ունիցիս զդա, մի ևս իբրև ծառայ, այլ ի վեր քան զծառայ, իբրև զեղբայր սիրելի. եթէ ինձ այսպէս, ո՛րչափ ևս առաւել քեզ մարմնով և Տերամբ։ Եթէ զիս քեզ հաղորդ համարիցիս, ընկալ զդա, իբրև զիս, և եթէ չանցուցեալ ինչ իցէ կամ պարտիցի, զայն ինձ համարեաց։ Ես Պաւղոս գրեցի իմով ձեռամբ, ես հատուցից, զի մի ասիցեմ քեզ՝ թէ դու զանձն քո ինձ պարտիս, այո՛, եղբայր, ես փոխանակ եղէց ի Տէր. հանգո՛ զաղիսդ իմ ի Քրիստոս։ Յուսացեալ ի հնազանդութիւնդ քո, գրեցի առ քեզ. քանզի գիտեմ թէ առաւել ևս քան զոր ասեմդ առնիցես (Առ Փիլիմոն Ա. 7—21)։

Տիրում է և որոմում պատմաբանի հոգին, երբ նա սկսում է ուսումնասիրել մեծ մարդոց մտածուածոր կեանքը։ Այս նրանիցն է առաջ գալիս, որ հազիւ են պատահում այնպիսի անձինք, որոնք չեն կորցնում իրանց դիւրթիչ նշանակութիւնն ու կախարդանքն, նոցա կեանքը մանրամասնաբար հետազօտելիս յետոյ էլ։

Զոր օրինակ երևակայեցէք ձեզ մի մատենագիր, որ Աստուածանից օժտեալ է մեծ հանճարով, նորա երևակայութիւնն արձագանգ է տալիս ամեն մեծ և ազնիւ գաղափարի. ինչ որ նա

իր զգայուն և սուր հոգեով ըմբռնել է, այնպիսի գրաւիչ գաղափարի է վերածում, որ յափշտակում է ձեզ և շարժում ձեր հոգեոյ թելերը: Եւ ահա այս մարդը մեռնում է. ձեր ձեռքն ընկնում է նորա օրագիրն, որոյ էջերում դուք գըտնում էք նորա գաղտնի մտքերն ու ձգտումները: Ո՛հ, մի կարդաք այդ էջերն, եթէ կամենում էք կատարեալ պահպանել այն կախարդանքն, որ ձեր մէջ նա յարուցել է: Այո՛, գեղարուեստագէտի մեծ հոգին էլ կրճեղիս է եղել անափառութիւնն, և մինչդեռ նորա հոգեշունչ երկերը մեզ երկինք են բարձրացնում. նորա հոգին զո՛հ է դարձած եղել սարսափելի նախանձի, մանր կրքերի և ամօթալի հաշիւների: Կամ երեւակայեցէք գիտնականին իր սառն և անկաղմնակալ մտքով, որ, կարծես ազատ ամեն մանր կենսական հաշիւներից, սաստուում է միայն բնութեան օրէնքների մտքում ոլորտում: Բայց պարզուում է, որ այդ միայն լոսո երեւութին է այդպէս, այլ նա իսկապէս հետեւում է իր իսկական փառասիրութեան նպատակին և պաշտպանում է կոստակչական նեղ շահերը: Պատմութիւնը լիքն է այսպիսի հակասութիւններով, այնպէս որ նրան քաջ հմուտ մարդը մեծ ճնշուածն ալէտք է գործէ իր վերայ, որ կարողանայ պահպանել յարգանք դէպի մարդս:

Ջոր օրինակ կարդում եմ Բոսուէլի դամբանական ճառերն և այնտեղ վերջին քարոզում, ուր նա ասում է, որ նորա ալիքն արդէն նախագուշակում են նորա վերջին ժամն, երբ նա պարտական է հաշիւ տալու Տիրոջ առաջ, յայտնում է նա, որ «եւ իր նուաղող ձայնի հանգչող զգացմանց վերջին այժերը կամենում է նուիրել իր հօրին, որին պարտական է կերակրել կենաց իւօսքերով»: Ինձ յուզում է այս ազնիւ ծերութիւնը, այս բարձր ճառն, որ ծանրութեամբ այս դարիս անցաւոր փայլի հանդէպ գնում է յաւիտենական ճշմարտութիւնը: Բայց օրանից յետ բաց եմ անում նորա օրագրութիւնն, որ նկարագրած են Բոսուէլի կենաց վերջին օրերի մանրամասնութիւնքն, և տեսնում եմ, ինչպէս նա հիւանդութիւնից հիւծուած, ամեն ջանքով աշխատում է եպիսկոպոսական աստիճան

ստանալու իւր եղբօրորդու համար, որ իւր քնաւորութեամբ իւր ժամանակի ամենաստոր անձնաւորութիւններից մէկն էր։ Բոսսիւէն այս նպատակի համար խնայում է Յիսուսականներին և աշխատում է կազդուրել իւր ոյժերն, որպէս զի կարողանայ բարձրանալ վերոյիլի սանդուղներն և անձամբ միջնորդել թագաւորի առաջ այդ անարժան գործի համար։

Անցնում է կէս դար, ահա մեր առաջևն է երևելի հակառակորդը քրիստոնէութեան, մի չար անձնաւորութիւն, որոյ ծիծաղը կարծես քրիստոնէական կրօնի անկումն է գուշակում, կրօնի, որ նա մեղադրում է ամեն տեսակ գարշագործութեանց մէջ, որոնք մարդիկ գործել են յանուն նորա, մի անձնաւորութիւն, որ հանդէս է բերում իւր ուսր և անխնայ երգիծաբանութեան մէջ եկեղեցու բոլոր քաղաքական խորամանկութիւնքը։ Բայց ահա Վոլտերը մեռնում է և նորա մասնաւոր գրագրութեանց մէջ ամեն բան պարզուում է, այն է այն անօրինակ անամօթութիւնն, այն շողոքորթութիւնն և հնարագիտութիւնն, աճպարարութիւնն, որ նա ցոյց էր տալիս, երբ նա կարծում էր թէ դրանցով կարող է վնասել իւր թշնամեաց, կամ ահա Վոլտերի հետ մի շարքում և մի այլ մատենագիր, որի ուշնութիւնն—անկեղծութիւնը գրաւում է մեզ և յուզում է։

Նա քարոզում էր զգացմանն քնականութիւնն և մեղադրում էր քրիստոնէական կրօնը նորա մէջ, որ իբր թէ սա զրպարտում է մարդկութիւնն, և որպէս զի յաջողութեամբ մատոնչէ նորա՝ կրօնի ցամաքեցնող ազդեցութեան դէմ, ստեղծում է այնպիսի անձնաւորութիւնք, որոց ազնիւ ղարմանքն առաջանում է միայն նոցա քնածին բարութեան թելադրութիւններից։ Ա յս մարդը Դիդրոն է, բայց նորա գրագրութիւնք պահպանուել են և ասցա մէջ կայ մի զարհուրելի խօսք,—նա հարցնում է դ'Ալամբերից, կմի արդեօք աշխարհիս երեսին գէթ մի մարդ, որ պարզապէս, առանց հռետորական ճոռոմաբանութեան, չհամաձայնէր սուելի շուտ իւր աղջիկը կորցնելու քան իւր հարստութիւնը։ Ահա և Ռուսսօն, որ նորա նման

ձգտում է բոլոր մարդկութիւնը նորից դաստիարակելու, քնութեան պահանջների համեմատ. բայց նորա «խոպոպանոցը» մէջ մենք կարդում ենք, որ մարգկութեան այս մեծ դաստիարակը սկսաւ նրանով, որ առաջ աղաւաւեցաւ իւր զաւակներից, որոնց ուղարկեց «պապիրոսակոնեան պոռնը»: Գալիս է ԺԲ երորդ գարի վերջը: Նոր ժամանակի ամենամեծ աստեղքանն իրոխատալի ձայնով աղգային ժողովի մէջ հարուածում է նախկին պետական կազմակերպութեան շուայլութիւնն ու կաշառասիրութիւնը· մի անգամ սա մեղադրելով իւր գործին գաւաճանելու մէջ, խօսում է ընտիր պաշտպանողական ճառ և ոտիլում է իւր զրպարտիչներին լռել: Բայց այժմ մենք գիտենք, որ այն ժամանակ, երբ Միրաբոն խօսում էր այդ ճառը, նա արդէն կաշառուած եղել:

Ես կարող էի այս օրինակների թիւը բազմացնել, ես կարող էի ձեզ հարցնել, թէ ի՞նչ եղան առաջին կայսերութեան (Նապոլէոն I) ժամանակ այն անհաշտ Յակոբեանք, որոնց լոկ ընդգոռոզ խօսքն արդէն աղգային աղատութեան համար վիրաւորանք էր թուում—բայց կարծում եմ, որ առաջ բերած օրինակներս էլ բաւական են, գուցէ և շատ էլ են: Ես ինչո՞ւ յիշեցի ձեզ այդ տխուր իրողութիւնները: Գուցէ՞ կուսակցական հաշիւներիս առթիւ: Հերիք է միայն աւելի խորասուզուել մտածմանց մէջ և դժբաղդաբար իւրաքանչիւր կուսակցութեան մէջ կգտնուեն դոյնատեսակ անձինք: Գուցէ նորա՞ համար, որ աւելի ստորացնեմ մարդկային բնաւորութիւնը: Աստուած պահէ ինձ դրանից, ես միայն կամենում էի ձեզ յիշել, որ երբէք չպէտք է հաւատալ ընծայել արտաքին կերպարանքին. այլ պէտք է թափանցել գործի էութեան մէջ: Եթէ դուք կամենում էք կարծիք՝ հայեացք կազմել մի մարդու վերայ կամ իմանալ, թէ արդեօք արժանի՞ է նա ձեր հաւատարմութեան, մի՛ հետաքննէք նրան միայն հասարակութեան մէջ կամ այն ժամանակ, երբ նա հրապարակաւ կատարում է իւր պարտականութիւնքն, երբ նա որ և է դեր է կատարում: Մի հայեացք նորա մանաւոր կեանքի վերայ, նորա մի որևէ անյայտ ծածուկ

վարմունքը կօգնէ ձեզ նրան ճանաչելու։ Իմ գլխումս այս մտքերը ծնան, երբ սկսայ խորհրդածել իմ քարոզիս բնաբանի վերայ, այս բնաբանն է Պօղոս առաքեալի թուղթին, ամենակարճը նորա թղթերից, որովհետև նա բաղկացած է միայն մի քանի տողերից։ Այս, կարծես, Հարևանցի իմն կերպով գրած նամակում մեր առաջին ներկայանում է այլ և այ ոչ թէ հեթանոսաց առաքեալն, ոչ թէ ազատաձաքանն, ոչ թէ մեր եւրոպական եկեղեցեաց հիմնադիրն, այլ մի սովորական մարդ, որ գրում է իւր բարեկամներից մէկին։ Ես էլ այդ պատճառով ժողովի, որ հէնց այստեղ կարելի է գտնել ամենայարմար միջոցը Պօղոս առաքեալի բնաւորութիւնն իւր իսկական լուսով տեսնելու։ Այս մասին էլ, եղբայրք, դիտաւորութիւն ունիմ ձեզ հետ խօսելու։

Մի անգամ Հռովմէական մի խաւարչտին բանտում հանդիպեցան միմեանց երկու բանտարկեալներ։ Մէկը Պօղոսն էր, Հռովմայեցի քաղաքացի, վարիսեցւոյ որդի, որ իւր քարոզներով յուզել էր և վրդովել էր Երուսաղէմն և Ասիան ու եկել էր Հռովմ համաշխարհական մայրաքաղաքը հնուշիւ տալու Կեսարի առաջին իւր հայրենակցաց մոլեռանգութիւնը գրգռելու համար, — միւսը հեթանոս Ոնեսիմոս, ստրուկ, որ խաբելով իւր տիրոջ փախել էր նրանից ընդարձակ մայրաքաղաքում ապաստանարան գտնելու համար, ուր և նրան բանտարկեցին։ Պօղոս այս սարկին քրիստոնեայ է դարձնում և երբ բանտի դռները բացուեցան Ոնեսիմոսի առաջ, Ս. առաքեալն ուղարկում է նրան նորա նախկին տիրոջ Փիլիմոնի մօտ նամակով, որ վերևը կարդացինք։ Այսպիսի մի երևոյթը գուցէ ձեզ շատ սովորական երևի, բայց գուցէ դուք փոխէք ձեր կարծիքն, եթէ ուշադրութեամբ քննէք այն։

Գիտէք արդեօք դուք, թէ այն ժամանակ ստրուկներին ինչ էին համարում։ Քննենք այս առանց կողմնապրութեան կամ աւելի լաւ է, թոյլ տանք այդ մասին իրանց կարծիքն յայտնելու նոյն ժամանակի մարդոց։ Մի գիտնական Հռովմայեցի Վարրոն անուանով, որ ապրում էր 30 տարի Քրիստոսի ծննդից ա-

առաջ, երկրագործական գործիքները բաժանում է երեք տեսակների. 1) գործիքներ, որոնք ձայն չեն հանում, զրօրինակ արօր. 2) գործիքներ, որոնք նշանակութիւն չունեցող ձայներ են հանում — ձիեր և եզներ և 3) խօսող գործիքներ — սորուկներ։ Վարրոնից շատ առաջ մեծն Արիստոտել ասում է. «ընտրուկներին պիտի կարծիք, որ և է սէր մարդկային է ունենալ դէպի կոպիտ գործիքները»։ Հաւականալի է, որ սորուկներին վաճառում էին, պարտք էին տալիս, ընծայում էին կամ կտակով աւանդում ուրիշին։ Երբ նոքա ծերութեան ժամանակ անօգուտ, անպէտք էին դառնում, նրանց տանում էին մի ամայի կղզի Տիբերիս գետի մէջ տեղում, ուր նոքա յաճախ սովամահ մեռնում էին։ Մինչև անգամ հռոմէական օրէնքներն, որոնք հին աշխարհի արդարասիրութեան գաղափարական պատկերներն էին, միևնոյն պատժի էին ենթարկում տարիքի և դրացը գրուածի սպանութիւնը։ Իսկ եթէ տորուկը սպանում էր իր տիրոջ, նորա եղեռնագործութեան համար կոտոմահ էին լինում նորա հետ միասին մինչև անգամ նորա բոլոր ընկերները։ Մի անգամ մի Հռոմէացի որսի ժամանակ պատրաստուում էր մի վարազ սպանելու, բայց սէգն, որ գոյել էր ընտրուկներից մէկին, առաջ ուղեց տիրոջ գիտաւորութեան և սպանեց գազանին։ Հռոմէացին, բարկանալով որ տորուկն իրան առաջ ուղեց, հրամայեց նրան խաչել և կիկերոն, մի լուսաւորեալ և բարի մարդ, որ վկայ էր այս իրողութեան, հարցնում է թէ արդեօք այդ վարմունքը շատ խիստ չէ։ Բայց նոյն կիկերոնը մի այլ դէպքում ներողութիւն է խնդրում, որ ցաւակցութիւն էր յայտնել մի ծերունի տորկի կորստեան առթիւ. այժմ մենք, անշուշտ, աւելի պատկառ կտուտանուէինք ցաւ յայտնելու մի ծերացած շան մահին։ Տորկատէրերը միշտ ընտրուկների կենաց և մահուան վերայ իրաւունք ունեցած են և յաճախ խնճոյքից յետոյ հիւրերի զուարճութեան համար նրանց սպանում էին։ Իրաւ է մի քանի իմաստուններ խորհուրդ են տուել սակաւ վարձատրել նրանց հարուածներով։ Միայն աւելացնում են, որ այդ այն նպատակով են ասում, որ ընտ-

րուկներն աւելի կարող լինեն իրանց պարտականութիւնքը կատարելու։ Վերջապէս սարուկների վերայ ծանրացած այս արհամարհանքն այնպէս ծանր է, որ վեցերորդ դարում Քրիստոսից յետոյ, իմաստասէր Մակրոբիոսն, որ առհասարակ բարձր մտաւոր կարողութեան տէր մարդ էր, գրում է, որ իսկական իմաստասէրն անպատուում է իրան, խօսակցելով սարուկի հետ։

Եւ ահա այսպիսի թշուառներից մէկին հանդիպում է Պօղոսը Հռոմում բանտի մէջ։ Դուք գիտէք, թէ որպիսի ոք էր Պաւղոս, փարիսեցու որգի, ինքն էլ փարիսեցի, նա ի բնէ մի տաք, անհամբեր և խիստ բնաւորութիւն ունեցող մարդ էր։ Ս. գրքում առաջին անգամ նորա մասին յիշատակութիւն է լինում Ս.Ստեփաննոսի սպանման պատմութեան մէջ։ Պաւղոսը, գալով դեռ ևս շատ մատաղահաս գոլով նորա դահիճներից մէկը լինելու համար, պահպանում է նրան քարկոծողների շորերը։ Եւ ահա միմեանց հանդէպ կանգնած են սարուկն և իր ծնէ փարիսեցին—ոչքա՞ր հասարակաց ունին միմեանց հետ։ Պատասխանեցէք ինձ դուք, որ չէք հաւատում քրիստոնէութեան, արդեօք նոքա ի՞նչպէս կվերաբերուէին միմեանց եթէ նոցա մէջտեղում չգտանուէր Աւետարանը։ Ո՛հ, դուք չէք հաւատում հրաշքներին և մեր հաւատը, որ Յայտնութիւն է ի վերուստ, օտարոտի իմն էք համարում։ Սրեմն այս հռովմէական բանդում ես ձեզ մատնացոյց կլինեմ մի իրողութեան վերայ, որ անհնար է բացատրել լոկ բնութեան օրէնքներով։ Ահա ձեր առաջին է փարիսեցի, բայց արդէն վերածնած փարիսեցի, նա լի է մեծ դաւակցութեամբ դէպի սարուկը, նա բոլորովին գրաւուած է թշուառականի վիճակով և այս հասարակաց արհամարհանքով ճնշուած եակի մէջ տեսնում է անմահ հոգի, խրատում է նրան, դաստիարակում է նրան երկնից արքայութեան համար, սիրում է նրան—ահա այստեղ է իսկական հրաշքը. այնքան սիրում է նրան, որ եղբայր է կոչում, ամենասիրելի եղբայր և որդի և իբրև թէ այս քիչ է, այլ և երկրորդ Եա է անուանում նրան. բայց դուք հրաշք չէք ըն-

դունում. ուրեմն բացատրեցէք ինձ այդ կերպարանափոխութիւնը, ասացէք, ուստի ծագեց այդ անսովոր զօրութիւնն, որ յանկարծ բղխեց այդպիսի հրաշալի ողորմածութեան աղբիւր այն հրէաներից մէկի սրտում, որոնց Տակիտոս անուանում էր բոլոր մարդկութեան ատելիք: Մենք, քրիստոնեայք, մենք գիտենք թէ ուստի: Այդ Քրիստոս արաւ, իւր արեամբ եւ վարիսեցուն և սարկին վրկելով: Նա միացրեց նրանց ընդհանուր սիրով, հրաւիրեց նրանց դէպի ընդհանուր երջանկութիւն, նրանց ժառանգորդ արաւ միևնոյն հաւատի և յուսոյ, ասլորցրեց նրանց ծունր իջանել միևնոյն օրհնութիւնը ստանալու համար և ահա բանալը գարձաւ նոցա համար արքայայր, այստեղ կատարուեցաւ առաքելոյ և սարկի միանալն, այստեղ սարուկը որդեգրուեցաւ վրկեալների գերդաստանին, որոնք ժողովեցան ամեն ազգերից և կեղերից, գերդաստանի, որ կմիանայ խաղաղութեան թագաւորի իշխանութեան դաւազանի ներքոյ: Վէր կայ Աեսիմոս, ան շղթաներդ և դնա էլի, եթէ հարկաւոր կլինի, տանջանաց և սարկութեան հետարկուելու — այժմ քո ճակատդ լուսով է շրջապատուաձ, այժմ քո սրտում անջնջելի կերպով տպաւորուաձ է յիշատակը՝ թէ գտնուեցաւ երկրիս երեսին մի մարդ, որ քեզ եղբայր անուանեց և վերածնեց քեզ յաւիտենական կեանքի համար. քեզ համար բացուեցաւ գիրկ և սրտիդ մօտ բաբախում էր մի այլ սիրտ, գնա ուրեմն և տար աշխարհին այս նոր՝ նրան անծանօթ, անսովոր սիրոյ լուրն, գնա և ցոյց տուր իշխաններին, որոնք մարմնոյ սարկութեան մէջ են, հոգի, որ ազատ է կրքերի և մեղքի լծից, գնա խեղճ սորուկ, կատարիր քո մեծ կոչումդ:

Այսպէս, եղբայրք, մարդկային արժանաւորութիւնը վերականգնեցաւ, բայց արդեօք միայն արժանաւորութիւնը: Ոչ, Պօղոս Առաքեալն այս սորուկին միայն մարդ չդարձրեց, կատարուեցաւ և մի այլ հրաշք՝ նա նրան սիրող մարդ դարձրեց: Նա սովորեցրեց նրան իր սիրոյ սիրել և սիրելով ծառայել նրան: Այս անշուշտ ձեզ զարմացնում է. գուցէ և հաճոյ չէ թուում, գուցէ գուք աւելի լաւ կհամարէիք, որ Պօղոս

նրան բարոյապէս բարձրացնէր, դրդէր նրան ապստամբելու։ Այո՛, մեր ժամանակ հէնց այդ են քրիստոնէութեան վերայ յանցանք դնում՝ «Անզօր է այն վարդապետութիւնն, ասում են մեզ, անկարող է այն կրօնն, որ չկամեցաւ ջախջախել ստրկութեան շղթաներն և չխնայաւ բարձրացնել ծանրաբեռնեալներին և հալածեալներին»։ Ես լսած եմ այս մեղադրանքն և ընդունում եմ այն միայն մի բացատրութեամբ՝ ինչում դուք անկարօղութիւն էք տեսնում, ես նրանում ստուգաճոխ զօրութիւն եմ տեսնում, որ չէ կարող մարդս ստանալ բնական ճանապարհով։ Դուք տեսնում էք զօրութիւն ապստամբութեան մէջ, բայց չէք տեսնում նրան այն զրմանալի համբերութեան մէջ, որ նոյն իսկ դահիճներին յոգնեցնում է, ուժասպառ անում։ Բայց թոյլ առժամանակ երևակայենք, որ ձեր երազներն իրագործուել են. ամենուրեք հրատարակուած է ներքին պատերազմ, Աւետարանը հրաւիրում է բոլոր հալածուածներին դէպի մեծ ապստամբութիւն. Կեսարի սիրտը խորտակուած է, հեղեղի պէս վազում է պատերիկների և քուրմերի արիւնը. սրբազնութիւնն ու աստուածութիւնն անընդհատաբար շարունակում են իւրեանց սպառման գործն և բոլոր հին աշխարհը դառնում է մի սպանդանոց։ Սրանից ի՞նչ առաջ կգայ։ Եղբայրութեան թագաւորութի՞ւն այդ օրը։ Խելքի եկէք. աստուածութիւնը ծնում է աստուածութիւն և արիւնն արիւն է պահանջում։ Եթէ ձեր նպատակն այս է, Աւետարանի առաջադրը բոլորովին այլ է։ Նա յայտնեց մարդոց այլ տեսարան, տեսարան սիրոյ, որ յաղթանակում է աստուածութեան վերայ, տեսարան հոգւոյ, որ յաղթող է նիւթական զօրութեան, խաչեցեալին խաչի վերայ, որ մեր և բոլոր աշխարհի հոգւոյ տէրն է, «Երբ ես կհամբառնամ երկրից — ամենքին ինձ մօտ կառնեմ»։ Ահա, եղբարք, առաջին խրատն, որ լսուանգակուում է իմ ընտրած քնարանիս մէջ. բայց այսուհետ ինձ զարմացնող էլի մի այլ առանձին հանգամանք կայ, որ է այն ոճն, որ պահպանում է իւր նամակի մէջ Պօղոս առաքեալը, սլաշտպանելով Փիլիմոնի առաջ սորա փախստական ստրկին։ Ես խօսքն այսպիսի ընտիր,

աղնիւ, սրտագութ Նրբութեան այլ օրինակ չգիտեմ, որ աւելի եւս նշանաւոր է նրանով, որ այնտեղ ամեն ինչ արդար է եւ մտերմաբար յայտնած։

Նայեցէք, թէ որպիսի հոգատարութեամբ Առաքեալն առաջ է բերում այն հանգամանքները, որոնք կարող են Փիլիմոնին տրամադրել յօգուտ յանցաւորին։ Փիլիմոնը քրիստոնեայ է եւ Ս. Պօղոսը յիշեցնում է նրան նորա հաւատքի եւ օգտակարութեան մասին, որոնք յոյժ ծանօթ էին քրիստոնեայ հասարակութեանց եղբարց. նա գրում է նրան, համոզուած լինելով, որ նա աւելին կկատարէ քան ինչ որ խնդրած է։ Նայեցէք, թէ որպիսի ընտրողութեամբ Ս. առաքեալն աշխատում է իր կամքը նորա վրին չկապել, «բայց առանց հաճարձակութիւն ունիմ ի Քրիստոս՝ հրամայել տալ քեզ զպարտականն վասն սիրոյ, մանաւանդ թէ աղաչեմ իսկ այնպիսի լինել՝ որպէս եւ Պօղոս ծերացեալ, արդ եւ կապեալ եւս Յիսուսի Քրիստոսի»։ Պօղոս ծերացեալ եւ կապեալ Քրիստոսի—որպիսի հեզութեամբ լի ճարտարախօսութիւն է, եղբարք, բովանդակուում այս պարզ խօսքերի մէջ։ Առաքեալն ոչինչ չէ կամենում ձեռնարկել առանց Փիլիմոնի համաձայնութեան «զի մի բարիքդ քո ի հարկէ լինիցին, այլ կամաւ»։ Այո, եղբայր, աւելացնում է նա վերջում, ես քո փոխանակ եղէց ի տէր. հանգո՛ զաղիսդ իմ ի Քրիստոս»։ Ես արդէն յիշեցի, թէ որպիսի խօսքերով խօսում է նա Ոնեսիմոսի մասին, որպիսի ամենաքաղցր անուններ է գրաշմում նորա գրիչը. բայց այս էլ դեռ բոլորը չէ։ Ոնեսիմոսը յանցաւոր էր իր տիրոջ առաջ անհաւատարմութեան եւ գողութեան մէջ։ Նկատեցէք դուք ահա, թէ որպիսի զգուշութեամբ Ս. Պօղոսը յիշում է այս մասին խոյս տալով այն ամեն հանգամանքից, որ կարող էր զօրացնել Ոնեսիմոսի յանցանքն եւ նորա ներկայ վարքն անցեալին դէմ դնելով. «Երբեմն անպիտան էր քեզ, բայց արդ քեզ եւ ինձ պիտանի. ասում է։ Արդեօք նոյն ձեն ու ձայնը չէ լսուում եւ Փրկչի խօսքերում, որ իր ձեռքը, նորա ուրքի մօտ նստած լացող Մարիամի վերայ տարածած, ասում է. «ինչո՞ւ էք դրան արգելում»։

«Եւ եթէ յանցուցեալ ինչ իցէ կամ պարտիցէ, զայն ինձ համարեայց»։ Բայց հարկաւոր էր ամբողջապէս առաջ բերել և այս թղթի իւրաքանչիւր խօսքի խորքը թափանցել, թղթի, որոյ մէջ տեղ են գտել այդպիսի ընտիր արտայայտութիւն և աղուրմածութիւն ու զգայման նրբութիւն ու ազնուութիւն։ Եւ այս ամենը գրում է մի երրայեցի, նախկին հալածիչ, յօգուտ այն առաւելութեան մէկին, որոնց հետ խօսակցելն անպատուութիւն էր համարուում ըստ հռոմէական իմաստութեան։

Իմ ուշադիր քրիստոնեայք։ Դուք ինչ էք մտածում այս սիրոյ վերայ։ Դուցէ մինչև յայժմ Պօղոս առաքեալը ձեզ թուում էր միայն աստուածաբան, որոյ անընկճելի տրամաբանութիւնը կարծես ճնշում էր մարդուս բնաւորութիւնը։ Նորա թղթերի խիստ և խորհրդաւոր լեզուն հիացնում էր ձեզ առանց գրաւելու, և դուք նոյա գրութեանց մանրամասնութեանց մէջ էլ չէք նկատած այն ջերմ սիրան, որ ընդունակ է այդպիսի կենդանի սիրոյ և այդպիսի խորին զգայման։ Մի խօսքով դուք չէք ճանաչում Պօղոս Առաքեալին։ Ձեզ նա ներկայանում էր իբրև կենդանի պատկեր հաւատարմութեան և անսահման եռանդի, բայց դուք երբէք չէիք կարծում նորա մէջ ողորմած սրտի ամենաքնքոյշ և սրտառուչ զգայմունքները գտնել։ Դուք, այո՛, անտարակոյս չէիք կարծում, որ նորա խիստ գրչից կարող է ծուլուել այնպիսի վայելչագիր ուշադրութիւն, այնպիսի յարգելի նախազգուշացումն, այնպիսի զարմանալի ճարտարութիւն ուրիշի աղատութիւնը չճնշելու, այնպիսի խորին նախատեսութիւն ամեն հանգամանքի, որ մարդուս հոգին յուզում է, այնպիսի բարձր և մի և նոյն ժամանակ սրտառուչ ոճ։ Ահա Աստուածայ շնորհքն ինչ է արտադրում, իսկ մեզ ասում են, որ քրիստոնէական կրօնը տկարացնում է մարդուս բնութիւնը, բթացնում է զգայմունքներն և թուլացնում է անձնուիրական միտումները։

Ինձ պատահել է տեսնել լաւ մարդիկ, որոնք չեն կամեցել մերձաւորապէս ճանաչել քրիստոնէութիւնն, այն սառն, ցամաք և անհոգի կրօնի երկիւղից, որ յաճախ քրիստոնէականի տեղ

են դնում և որ, մեծամեծ զոհեր պահանջելով, կեանքի մէջ մտցնում է միայն խաւար և ուշնայնութիւն։ Յաւալի, բայց դժբաղդաբար մեր մէջ յոյժ տարածուած նախապաշարմունք է այս։ Ո՛չ, քրիստոնէութիւնը բնաւ չէ հակառակ մեր բնութեան, այլընդհակառակն վերականգնում է այն և բարձրացնում. նա դատապարտում է մեր անկեալ և մեղքից տգեղացած բնութիւնը՝ Աւետարանն՝ մարդոց յայտնուած այդ Աստուածային ճշմարտութիւնը, հիմնուած է հէնց մարդկայինը Աստուածայինի հետ միացնելու վերայ։ «Նա դաշն է կապում բնական մարդու հետ, որպէս ղի մարմնի անկեալի դէմ, այսինքն այնպիսի մարդկութեան հետ է միանում, որպիսի սա պէտք է լինէր, ընդդէմ այնպիսի մարդկութեան, որպիսի սա է»։ Դուք տեսնում էք միայն այն, ինչ որ Նա (աւետարանը) ձեզնից խլում է. բայց ուշադրութիւն դարձրէք եւ նորա վերայ, ինչ որ Նա տալիս է, նայեցէք ինչպէս նորա բարերար աղդեցութեան ներքոյ վերածնուած սիրտը կենդանանում է նոր կեանքի համար, ինչպէս անձնասիրութեան տեղն, որ միշտ կազմել է յանցաւոր կրքի վերջին հիմքը, բռնում է զոհողութեան համար պատրաստ ողորմածութիւնը, նայեցէք այդ անձնուիրութեանից անսահման աշխարհի վերայ, որոյ հորիզոնը անվերջ հեռաւորութեան մէջ է.—դա երկինք է երկիր իջած։ Մի խօսքով նայեցէք Ս. Պօղոսի վերայ այն հասակում երբ ամեն ինչ նուաղում է, տկարանում՝ նորա սիրտը, հակառակ ամենապիշալից կեանքի դառն փորձերին, ընդարձակուում է, աւելի սիրալից է դառնում, ողորմած նման անգադար ածող հեղեղատին, որ հանդիպելով իւր ընթացքում խոչընդոտանների, բարձրանում է, փռուում է և իւր անդիմադրելի ալիքներն առաջ է մղում։

Վերջապէս, իմ կարծիքով այդ թվերի մէջն է և բանալին, որով մենք կարող ենք հասկանալ Ս. Պօղոսի զարմանալի գործունէութիւնն և նորա յաջողութիւնը, իբրև առաքեալի։

Մտածեցէք, նոյն իսկ անձնանուէր մշակին, որ այնքան մարդկային քրիստոնեայ դարձրեց, այնքան եկեղեցիք հիմնեց և մինչև

անգամ բանալի մէջ շարունակում էր իւր լուսաւոր գործունէութիւնը գրութեանց և իրան այցելող քրիստոնէից տեսակցութեան միջնորդութեամբ, այդպէս իսկ Պատրոսը ժամանակ և հնար գտնում է լուսաւորելու այդ սարկին, սիրելու նրան և առ Քրիստոս նրան դարձնելու: Սկզբում ես լսեցի այն հիասթափմանց մասին, որ յաճախ ունենում ենք, երբ մանրամասնաբար հետազօտում ենք այն մարդոց կեանքն, որոնք հաւատարակութեան մէջ նշանաւոր տեղ են բռնում, բայց Ս. Պօղոսի այսպիսի հետազօտութեամբ, բարձրանում է մեր աչքում և նորա յորդորներն և հրաւէրներն առ եկեղեցիս նոր ոյժ և զօրութիւն են ստանում, երբ մենք տեսնում ենք թէ ինչպէս նա ճանճռալի, սուտերի մէջ կենդրոնացնում է իւր խմաստութեան բոլոր գանձերն և իւր հոգայողութիւնը տգէտ և խեղճ ստրկի հոգւոյ վերայ: Մինչև որ ձեր առաջ կանգնած էր մի հասարակական գործիչ, դուք կարող էիք կարծել, որ նորա եռանդի հետ միանում է անտարակոյս և մարդուս օրինաւոր փառասիրութեան մի մասը, մարդու, որ եկեղեցիք էր հիմնել և իւր յաջողութեանց մէջ գտել էր իւր վարձը. դուք կարող էիք մտածել, թէ երբեմնապէս նրան զեկավարած և դրդած կլինէր նորա առաքելական գործունէութեան երկրաւոր փառքը: Բայց այս դէպքում ոչ են յաջողութիւնը, փառքն և վարձը: Կարող է միթէ նորա փառասիրութիւնը շոյշոյել դարձն առ Քրիստոս Ոնեսիմոսի, մի ստրկի, որ յայտնապէս նորա հաստատամտութեամբ: Եղբարք, ես զարմանում էի Պօղոս առաքեալի վերայ նորա մեծայաղթ գործունէութեան պատճառով, ես զարմանում էի նորա վերայ, երբ նա, հնազանդ նրան կոչող Աստուծոյ հոգւոյ ձայնին, շրջում էր բոլոր հռոմէական աշխարհն, իւր ճանապարհին թողնելով ամբողջ շարք նորակազմ եկեղեցեաց Լիւստրայում, Դերբիայում, Պերգամոսում, Փիսիդիայի Անտիոքում, Աստալիայում, Տրովադայում, Փիլիպպէում, Թեսաղոնիկէում, Բերէայում, Աթէնքում, Կորնթոսում, Եփեսոսում, Միլետում, Կիպրոսում, Տիբրոսում, Կեսարիայում, Մալտայում և այլ շատ տեղերում: ես զարմա-

նում էի նորա վերայ. որ միշտ գործունեայ էր, առույգ, առ-ոչինչ էր դնում յոգնածութիւնը, անքուն գիշերները, վտանգ-ները, հալածանքներն, արհամարհանքն ու միշտը. բայց աւելի զարմայնան արժանի է նա հաւատում՝ բանդում՝ ուր նա մի սարկի հոգուն նուիրում է իր բոլոր հոգածութիւնն ու սէրը:

Բայց ինչո՞ւ մենք նորա գործունէութեան երկու կողմերը միևնոյն հանդէպ դնում ենք, համեմատում, այն ինչ նոցանից մէկը միւսի բացատրութիւնն է: Սուրբն Պօղոս, որ չուսաւ-րում է Անեսիմոսին, — ահա այս է պարզում մեր առաջ Պօղոս առաքեալին, որ աշխարհն հնձարկում է Յիսուս Քրիստոսին: Եկեղեցիք — խոհակէս հոգիքն են. հիմնել եկեղեցիք կնշա-նակէ հոգիքը գարձնել: Իսկ հոգին մի այն սիրով կարելի է գարձնել: Բայց ինքն Պօղոս առաքեալը տարիս է մեզ բանալին նորա գործունէութիւնը հասկանալու համար. նկարագրելով իր ծառայութիւնն Եփեսոսում, նա ասում է. «Յիշեցէք, որ երեք տարի շարունակ գիշեր և ցերեկ իւրաքանչիւրիդ ար-տասուօք գարձնում էի: Ի-ջուտանդի-չինք Յեպենց և սրանով բո-լորն ասած է. Սուրբ Պօղոս այսպէս կատարելով իր գործը, հետևում էր միայն իր Ուսուցչի օրինակին, որ երկրի վերայ իջաւ որ բոլոր աշխարհը փրկէ և սկսաւ նրանից, որ փրկեց Պետրոսին, Անդրէասին, Փիլիպպոսին, Նաթանայէլին, Մարիամ Մագթաղենացուն, Զաքէոսին, անյայտ անձանց, աշխարհիս ագէտներին և փոքրներին և նրանց վարդապետից ու խրա-տեց, կարծես Հէնց միայն նոցա համար էր երկնքից իջել:

Արդեօք մեզ համար էլ, եղբարք, չկա՞յ այս օրինակի մէջ եւ նախազգուշացում եւ յանդիմանութիւն: Մրթէ մենք այս-պէս ենք վարուում:

Արդեօք մենք ընդունակ ենք այսպիսի ողբմածութեան, այսպիսի անխոնջ գործունէութեան համար, որ. եթէ հարկա-ւոր է, կենդրոնանում է մի հոգու վերայ այնքան ժամանակ, մինչև սա կդառնայ: Անենք այստեղ մի ընդհանուր նկատողու-թիւն: Մեր ժողովուրդը համակիր է տեսնելու կրօնի մէջ աւելի հասարակական քան անձնական գործ: Եկեղեցին մեր աչքում

աւելի պետական հաստատութիւն է թուում քան հոգևոր ընտանիք: Խօսեցէք ֆրանսիացու հետ կրօնի մասին և նա խոյն կսկսէ դատել եկեղեցու վերայ, սորա պահանջների, սորա թշնամեաց, նորա պատերազմի վերայ և հէնց նորա այն պատերազմի վերայ, որ լինում է նորա ընկերական—հատարական դիրքի համար: Բայց նա յաճախ մոռանում է, որ այստեղ խնդիրը գլխաւորապէս նորա իրան մասին է, նորա ուղիղ և անձնական յարաբերութեանց մասին է առ Աստուած: Մենք իրանքս ենք ղիջանում այդ ընդհանուր հասանքի առաջ: Մենք յօժարութեամբ խօսում ենք մեր դարի, սորա թշուառութեանց ստանջանաց և ստորացման մասին, յօժարութեամբ ուսառնում ենք անորոշ վերացական գաղափարների շրջաններում և մարդկութեան վերածնութեան մասին հոգալիս յաճախ մոռանում ենք մարգուն, որ մեր աչքի առաջ տանջուում է և կորնչում: Ընդունենք, որ մենք կոչուած էինք ծէրից աշխարհի ազատութեան համար Օգոստոս կայսեր ժամանակ: Մենք անշուշտ կհիմնէինք կրօնական ընկերութիւն, կհրատարակէինք յօդուածներ, կյարձակէինք այն ժամանակուան Եպիկուրեան և Ստոյիկեան վարդապետութեանց վերայ, կպատցուցանէինք Ստոյիկեաններին նոցա նաև բարոյականութեան անհոգի լինելը, բայց երբէք չէինք հաւատալ, որ մեր նպատակին հասնելու ամենաստոյգ միջոցը մի Գալիլէական գիւղում մի քանի մաքսաւորներ և ձկնորսներ կրթելու մէջն է, ճանապարհին մի սամարացի կնոջ յաւիտենական կենայ բանն աւետելու մէջն է և կամ մի բանտարկեալ նորուկի հոգին դէպի լոյս և ճշմարտութիւն դարձնելու մէջ է: Ով գիտէ, գուցէ այդ հաւատարմութիւնը մանր բաների մէջ մեզ ի ղուր կորցրած աշխատանք թուէր, գուցէ մենք որոնէինք գործունէութեան աւելի ընդարձակ ասպարէզ և անձնաւորութիւնք, որոնք աւելի արժանի էին մեր հոգածութեան և սիրոյն: Իրաւ չէ՞, որ այս ամենը կարող էր պատահել: Այսպիսի գէպքում ներեցէք ինձ իմ վերջոյ ցոյց տալ ձեզ, որ այսպիսի վերաբերութիւնը դէպի գործը նախ շեղում է

մեզ արդար ուղիով ճանապարհից և երկրորդ պայմանաւորում է անշուշտ մեր աշխատանաց ունայնութիւնը։

Ընդհանուր գործով յափշտակուելիս աւելի հեշտ բան չկայ, սոյա համար միայն երևակայութիւնը հերիք է, սրովհետև վերացականութիւնք ամենևին չեն շօշափում մարդուս խիղճը։ Ջորբինակ շատ հեշտ է ողբալ գարիս շատյութիւնն և բարուց անկումն, բայց այս դժգոհութեանց բուռն արտայայտութիւնից յետ էլ մենք չենք պակասացնիլ մեր սեղանից մի տեսակ կերակուր, չենք պակասացնիլ մեր զարդերի և ճոխութեան շատյ ծախքերից մի կոպեկի, չենք յաղթիլ մեր ոչ մի անփոյթ և զգայական սովորութեան։ Մենք խօսում ենք աշխարհի վերըկութեան վերայ և սրանից յուզուած այս քարէ խնդրից էլի ոչ մի ջանք գործ չդրինք, որպէս զի ի բարին ուղղենք մի ագէտ ու խաւարամիտ մարդու, որին գանելու համար կարիք չկայ հեռուները պտտիլ, մենք ապրում ենք կողք կողքի կպած մեր ծառաների հետ, առանց երբ և իցէ մեզ հարց անգամ տալու թէ արդեօք նոքա ունին անմահ հոգի և ամբողջ ամիսներ ու տարիներ շարունակ չենք խօսում նրանց քրիստոնէական սիրոյ մի խօսք էլ։ Այո՛, այժմ էլ, զարմանալով Պօղոս Առաքեալի վերայ, որ ուսուցանում է Ոնեսիմոսին, մենք մինչև անգամ չենք էլ հարցնիլ մեզնից, թէ արդեօք մեզ մօտիկ կամ մեր ճանապարհին ևս չկան Ոնեսիմոսներ։

Մենք խօսում ենք ազգային լուսաւորութեան վերայ և ծափահարում ենք այն ազնիւ անձանց ջանքերին, որոնք ձգտում և աշխատում են այս ազնիւ նպատակի համար, մենք ցանկանում ենք ցոյց տալիս աշխատասիրութեանց համար — բայց երբէք մենք մեզ չենք հարցնում, թէ արդեօք մեր այս կամ այն ձեռնարկութեան համար ի գործ դրած գումարի շահը չէ՞ աւելցած ի հաշիւ բանուորների օրական վարձի պակասութեան և արդեօք այսպիսի դէպքում մենք արժանի չե՞նք Յակոբոս առաքեալի բարձրագոչ յանդիմանութեան, թէ «ահա ձեր արտը հնձող մշակներից կորած վարձը ազաղակում է, և հնձողների ողբոց ձայնը հասաւ զօրութեանց Տի-

լոջ ականջին»: Ոչ, մենք չենք սիրում աղքատի խրճիթի շեմքը կոխել, ոչ, մենք մինչև անգամ աղքատութեան կերպարանքից զզուելով զզուում ենք:

Մենք խօսում ենք, որ պէտք է վերականգնել եկեղեցին, բայց ամենայն հոգացողութեամբ խորշում ենք մեր հաւատի յայտնի և աշխարայ խոստովանութիւնից. որպէս զի ծաղրածութեանց և հակառակախօսութեանց չենթարկուենք: Գուցէ մենք շատ և շատ յանկանում ենք, որ մեր եկեղեցին չվրդովվեն մոլորութիւնք, բայց երբէք հաստատուն և համարձակ կերպով չենք յոյց տալիս մի մոլորուած հոգու այն ճանապարհն, որ տանում է աւ Տէր:

Ինչո՞ւ արդեօք գուք թէ սորա հետևանքն ինչ է: Այն է, որ դրանից է կախուած մեր ամբաւ յաջողութիւնը: Ինչո՞ւ: Որովհետև գաղափարները չեն աշխարհ վիրկում, որովհետև վերացական տեսութիւնք երբէք յաղթանակ չեն տանիլ, չեն յաղթիլ չարին և մեղքին, որովհետև գործս համար բոլորովին մի այլ ինչ հարկաւոր է, այն է՝ սիրող սրտի եռանդ, որ ճշմարտութիւնը կեանքի համար մարմնացնում է, իսկ գաղափարներն առանց նրանց կենդանութիւն ստուղ սիրոյ նոյնն են, ինչ որ է արեգակը ձմեռը, սա յայտնի բան է լուսաւորում է, բայց նորա ճառագայթների տակ կարելի է սառչել: Կրկին ասում եմ ձեզ, նայեցէք Պօղոս Առաքեալի վերայ, որ լուսաւորում է Ընեսիմոսին, իւր հիանալի սիրով բաց է անում սորկի խաւար սիրան և ուսուցանում է նրան հեռու մնալ հայհոյքներից, միայն և եթ ամենատես Աստուծոյ աչքի տակ: Ինչ, ով մեծ առաքեալ, որ հաւատարիմ ես փոքր բաներում և անյայտ ծածուկ աշխատանքի մէջ, քեզ—կպատկանի ամենայաղթ գործունէութեան մեծ յաջողութիւնն, իսկ մեզ՝ քրիստոնէից, ներկայ դարիս զաւակաց, փքուն խօսքեր և անբաւ կենցաղավարութիւնք, որոնք անցնում են առանց օգտի:

Բայց մենք կանգ չենք առնիլ այս տխուր մտքերի և խորհրդոց ածութեանց վերայ: Քրիստոնէական խոնարհութեան յատուկ չափի լինի վատութիւնը—երկչոտութիւնը: Ինչո՞ւ

մենք եւ չհետեւենք Պօղոս Առաքեալին. սիրել երբէք ուշ չէ և Աստուծոյ սէրը թափանցելով մեր սրտերն և այժմ, որպէս վաղ, կարող է հրաշքներ գործել տալ օգնութեամբ Ս. Հոգւոյն:

Եկեղեցի, մեր ժամանակի քրիստոնեայ եկեղեցի, Դու հոգոյ ես հանուժ քո անյաջողութեանց համար, քո թուլութեանց համար և առանց այլ ևս աշխարհի վերայ յաղթութեան մասին երազելու, արտասուօք թուլամ ես բազմացող հերձուածները—մեր կամ, հանիր ագոյ ղգեստներդ, լուսաւորութիւր քո Տիրոջ վառաց ճառագայթներով և մոխիր քեզ շրջապատող ժողովրդի մէջ, առ քեզ վերայ նորա քեռն և տար քեզ վերայ նորա ցաւերը: Այլիր, գնա կորած հոգիների մօտ, որոնիր և փրկիր Մագթադալինացիներին, Զաքէոսներին և Ննեսիմոսներին և ոգեւորելով վառաւոր յաղթութեանց, որոնք քեզ խոստացել է Աստուած, ուրախացիր հրեշտակների հետ միասին մի ղղջացած մեղաւորի համար:

(Բերուէ):

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

Մեր ուսումնարաններում (մայրենի և օտար) լեզուի ուսումը աւելի հիմնուած է քերականութեան դասերի վերայ, որոնց արդիւնքը մեծ մասով քիչ է լինում: Ուսուցիչը գիտէ իւր առարկան, աշակերտները ամենայն չանքով աշխատում են, բայց և այնպէս պտուղը անմխիթար է. ինչո՞վ պէտք է բացատրուի այս տխուր երեւոյթը:

Մնում է որ պատճառը փնտռենք դասատուութեան եղանակի մէջ:

Վեր առնենք մի օրինակ և լուծենք ինչպէս որ մեր ընտիր ուսուցիչները սովորութիւն ունին լուծելու: Հ. Արսէն Այտընեանը լաւ ուսուցիչ է, և մենք կաշխատենք նորա եղանակով լուծել հետեւեալ օրինակը.

ՃՆՃՂՈՒԿՆԵՐ

Մի աւերակ վանք, որ բազմաթիւ ճնճղուկներին ապաստան էր տուել, նորոգուեցաւ: Երբ այդպէս իւր նախկին պայծառութիւնը առացաւ, ճնճղուկները կրկին եկան իրանց հին բոյները վերստեղծել: Բայց արդէն բոլորը ծեփած սեւան: «Էլ ինչի՞, աղաւակեցին նոքա, հիմա էլ ինչի՞ն է պէտք այսպէս ահագին շէնքը: Վեր կայէք, այս անօգուտ քարակոյտից հեռանանք»:

Ընթերցողը գիտէ, թէ մենք ինչ նշանակութիւն ենք տալիս համաձայնական մասին, նախադասութեանց ուսման, ուստի և աւելի այս կէտը ի նկատի կառնունք, և ոչ թէ ստուգաբանական մասը: Հ. Աբեղեան ցուցմամբ վերի օրինակը մօտաւորապէս այսպէս պէտք է լուծուի.

Մի աւերակ	ածականներ՝ վանի դոյականի:
վանք	անուն՝ նորոգուեցաւ բայի. որոշուած՝ ը, սեռակ ածականներով:
որ	յարաբերական դերանուն՝ վանի յարաբերեալի. անուն՝ պատել էր բայի եւ միջանկեալ նախադասութեան:
բազմաթիւ ճնճղուկներին	բազմութիւն, ածական՝ ճնճղուկ-ներին դոյականի. նախադասութեան: ճնճղուկներին, խնդիր - լնուածան՝ պատել էր բայի:
ապաստան	խնդիր - սեռի՝ պատել էր բայի:
տուել էր	էականով բաղադրեալ բայ՝ ը անուան - բայի եւ միջանկեալ նախադասութեան:
նորոգուեցաւ	բայ՝ վանի անուան - բայի եւ գլխաւոր նախադասութեան:
———	Մինչեւ այս տեղ՝ Առաջին նախադասութիւն:
Երբ	անի որով ժամանակական մակբայ՝ պատճառ բայի:
այդպէս	դերանունական - որակական մակբայ՝ պատճառ բայի:
իւր նախկին	ած ականներ՝ պայծառութիւնը դոյականի:
պայծառութիւնը	խնդիր - սեռի՝ պատճառ բայի. որոշուած՝ ը, նախկին ածականներով:

տատցաւ	բայ: Անուն – բային զօրութեամբ է իմացվում՝ այսինքն վնաս զոյական կամ նա զերանուն:
ճնճղուկները	անուն՝ եկած բայի:
կրկին	մակբայ՝ եկած բայի:
եկան	բայ՝ ճնճղուկներ անուն – բայի:
իրանց հին	ածականներ՝ բոյները զոյականի:
բոյները	խնդիր – սեռի՝ փնտռելու բայի:
վնաս տալու	խնդիր – բնութեան՝ եկած բայի:
———	Երկրորդ նախադասութիւն:
Բայց	շաղկապ՝ եկած փնտռելու եւ գտնուն բայերի զօդիչ...ուն:

Այս երկու նախադասութեանց լուծմամբ բաւականանանք, որովհետեւ ինքնին երեւում է, թէ շարունակութիւնը ինչ պէտք է լինի: Բայց մի՛ թէ թերութիւն կայ մէջը: Տեղեկութեանց ճշտութիւնը, ուսումնական հիմքը շատ հաստատուն է. բնդեղծուի համար դորանից աւելի չի պահանջուի: Այլ մենք ի նկատի պէտք է առնունք այն հանգամանքը, թէ նոյն վերլուծութիւնը հմտութի համար էր, ուսուցեցնելու համար: Իսկ այս կողմից նա խիստ թմբրեցուցիչ ազդեցութիւն պիտի գործէ, և իրաք ևս գործում է:

Ինչպէս որ ջրաղացի քարը իւր տաղտուկ մռակերպ ձայնով մարդուն քնեցնում է, միտքը մթնեցնում է, այնպէս էլ անդադար քերականական ձայները (յատկացուցիչ, բացայայտիչ, անուն – բայի, բայ և այլն) ծուլացնում են աշակերտի քնքոյշ ուշիմութիւնը, որովհետեւ միայն ուսուցիչն է հասկանում այն ձայների իսկական խորհուրդը, մինչդեռ աշակերտի համար՝ նորա դառնում են եօթը փականքով փակուած քրմական գիտութիւն, Ինչի՞ համար է այդքան աշխատութիւն, ի՞նչ օգուտ դորանից. այսօրինակ հարցմունքները անդադար տանջում են մանուկին: Նա մի և նոյն ժամանակ սովորում է պատմութիւն, աշխարհագրութիւն, մաթեմատիքա...և իւրաքանչիւրի բարերար ազդեցութիւնը իւր վերայ՝ այսպէս կամ այնպէս շարունակ զգում է. իսկ լեզուի ակարութիւնը միշտ նոյնպէս է մնում, որքան էլ որ քերականութիւն սովորէ. ի՞նչ շահ ուրեմն, հարցնում է նա:

Քերականական այսպիսի լուծումը՝ ցոյց է տալիս լեզուն իւր անշարժութեան կողմից, մինչդեռ դորա մէջ կենդանութիւն կայ: Ամենայն նախադասութեան մէջ մի սերմ կայ, որ ծլում, բողբոջում, կեանք է առնում, ծաղիկներով է բացվում. իսկ աշակերտը տեսնում է կոր կոր անդամ-

ատած մեռելութիւն, այսինքն նա տեսնում է նախադասութեան բառերը այն կարգով, ինչ կարգով որ դէպքը իրար մօտ շարել է. մի նախադասութեան մէջ տեսնում է նախ՝ ածական, միւսի մէջ նախ՝ հոլով, ինչպէս որ առ հասարակ դէպքը և պատահմունքը ուղեցել է քմահաճութեամբ խաղերը խաղալ։ Նա սովորում է հաստ ու բարակին մէկ դին տալ. արդեօք ածական է, արդեօք մակբայ, մի և նոյն է, թող առաջին բառը լինի, ուրեմն էլ ոչ մէկը հետաքրքրական չէ։ Զեղքութեան և անտարբերութեան զգացմունքը սկսուեցաւ, որ գնալով աւելի է զօրանում։ Նորան սովորեցնում են այս բանը կոչել ածել, այն բանը՝ ոտ, երրորդը՝ ոմտ, չորրդը՝ ընկեր և հող . . . և ասում են, թէ վերջապէս այդ բոլորը միացած երեւակայիր և կը դառնայ ընկերոջ պարտէզ, կենդանի աշխարհ . . . ։ Մի թէ այս չի՞ նշանակում ծիծաղել մանկան առողջ դատողութեան վերայ, ապուշացնել նորա միտքը, մարել նորա բանական լոյսը. և մի՞թէ նոյնպէս չի՞ վարվում քերականական լուծումը։

Արդարութեամբ խօսելով՝ մենք պէտք է այն էլ աւելացնենք, թէ Հ. Արսէնը մի ուրիշ ձև ևս առաջարկում է լուծելու համար, որ և արդէն գործ են դնում ուսուցիչներից շատերը, մանաւանդ օտար լեզուներ սովորեցնող ուսուցիչները։ Նա ասում է. «Բայց շատերու սովորութիւն է՝ նախադասութեան մէջէն յոռաջ անուն - բայն որոշել, յետոյ բայն և իր խնդիրը. և անկէ ետքը՝ խօսքին երկրորդական կամ ամբողջացուցիչ մասերը լուծել»։ Լուծման այս կերպը անշուշտ աւելի լաւ է. միշտ մի կենդրոն կայ աչքի առաջ, որ տեղից որ միւս մասերը յետոյ որոշւում են։ Բայց և այնպէս մեռելութիւնը դարձեալ մեռելութիւն է մնում, լեզուն իր կենդանի շարժումը չի ստանում, որ միայն կենդանացնել կարող էր նա և աշակերտի աշխոյժը։ Երանի՞, օրքան որ Հ. Արսէնի քերականութեան մէջ իմաստութիւն, հմտութիւն, լեզուագիտութիւն կայ, այնքանը լաւ դասաւորուած լինէր ձևռնարկի ձևով. մեր ուսուցիչները դժուարանում են այդ հարուստ գանձից հարկաւորը շնորհալի կերպով քաղել։

Լեզուագիտութիւնը շատ է առաջ գնում. դասատուութեան եղանակը նորա քայլերով պէտք է գնայ, բայց ոչ թէ այն անսպառ գանձից բան պակասեցնելով, այլ աւանդելի նիւթը լաւագոյն կերպով դասաւորելով։ Նոր ժամանակներում Գերմանացի մանկավարժ Կէրնը շատ յարմար ոճ է առաջարկել լեզու դաս տալու համար*), որ և մենք կարևոր ենք համա-

*) Ա.յդ խնդրին վերաբերեալ նորա շարադրութիւններից մեր ձեռքը հասել է միայն հատը, որոնք գոյէ ևս այժմ շարունակութիւն ունենան. որ մեզ ուսկաւորն չէր, նորա են Deutsche Satzlehre, Zur Methodik, Zur Reform, Grundriss.

րում ընթերցողներին այսու հաղորդել։

Ամէնից առաջ այս խնդիրը պէտք է պարզուի, թէ իւրաքանչիւր նախադասութեան մէջ արդեօք ո՞ր անդամն է աւելի նշանաւոր և կենդրոն է կազմում ամբողջութեան մէջ։ Մենք տեսանք, թէ նախադասութեան մէջ բառերի պատահական կարգը չի կարող ցոյց տալ իրանց արժէքի աստիճանաւորութիւնը, այսինքն տեղով առաջին բառը՝ միշտ արժէքով առաջին չի լինի։ Իսկ եթէ ոմանք նախադասութեան մէջ նախ փնտռում են անուն-բային կամ ենթական, ասացինք, թէ այս աւելի լաւ եղանակ է. բայց պիտոյ, որ դժուար է երևակայել, թէ այդ եղանակի վնասները ևս որքան ընդարձակութիւն են ստանում։

Կարծես թէ մի անմեղ ըբօսանք է, երբ որ աշակերտին անդադար հարցնում ենք, թէ «՞ո՞ մասին է խօսքը, կամ թէ ո՞րն է նախադասութեան անուն-բային։ Ա՛յս հնարով աշակերտի գլխի մէջ պինդ բևեռում ենք այն սխալ գաղափարը, իբր թէ նախադասութեան գլխաւոր մասը դէպ ենթական է. և նա էլ դրքեր կարդալիս ու խօսածները լսելիս՝ միմիայն ենթական ըմբռնելու է աշխատում (միւսները նորա ուշադրութիւնից հարկաւ ցնդվում են), ուրեմն «՞վքե՞ր է հասկանալ կ՚ուզէ կերպով. վերջապէս նա իւր գլխաւոր ասելիքն էլ դէպ աշխատում է ենթակայով արտայայտել, ուստի և նորա բանեցրած նախադասութիւնները զուրկ են լինում կենդանութիւնից, լրութիւնից, որոշութիւնից, ազատութիւնից և գեղեցկութիւնից։ Խօսք չը կայ, թէ սոքա ամենքը մանր վնասներ չեն։

Արդէն նոյն իսկ մեր հայերէն լեզուն յաճախակի գործ է ածում ընդհանուր նախադասութիւններ. փոխանակ ասելու «ես կարծում եմ», «ես ծուլացել ես» լեզուն շատ անգամ բաւական է համարում կարճ արտայայտել՝ կարծում եմ, ծուլացել ես, անուն-բային զօրութեամբ և ոչ ներգործութեամբ նշանակելով։ Ա՛յս մի թեթև նշան է, թէ նախադասութեան կենդրոնը ենթական չի կարող լինել։

Յետոյ մենք ունինք բազմաթիւ դէպքեր նախադասութիւնների՝ «անձրևում է», «մեղք է», «հարկ է», որոնք ընաւ անուն-բայի չունին ոչ ներգործութեամբ և ոչ զօրութեամբ։

Գուցէ առարկուի, թէ «կարդացի», «թշնամացար», նախադասութիւններ չեն, այլ լոկ միայն բայ են։ Բայց սխալ է, դրքա մի և նոյն ժամանակ կատարեալ նախադասութիւններ են. իսկ եթէ այդպիսի նախադասութիւնը դէպ է երևում մեզ և կարօտ է լրացման, մենք աւելի փափագում ենք իմանալ ոչ թէ անուն-բային, ոչ թէ ո՞վ է կարդացողը և

ո՞վ թշնամանողը, այլ թէ ի՞նչ եմ կարդում, ե՞ր եմ կարդում, ո՞ր տեղ եմ կարդում, ո՞՜ր հեռ ես թշնամացել, ինչի՞ ես թշնամացել, ո՞ր ֆամ. Նայէլ ես թշնամացել. մի խօսքով մեզ հետաքրքրողը ուրիշ բան է, քան ենթական։

Թէ երբեմն ենթական մեծ նշանակութիւն ունի, տարակոյս չը կայ, բայց արդեօք միայն նա՞։ Մի՞ թէ «480 թուականին Թեմիստոկլէսը պարսիկներին յաղթեց Սալամիսի մօտ» նախադասութեամբը՝ Թեմիստոկլէսի՞ մասին միայն տեղեկութիւն եմ հաղորդում, և արդեօք ոչինչ չե՞մ ասում յաղթուած պարսիկների և այն կղզու մասին, որի կշտին որ յաղթութիւն ստացուեցաւ, նոյնպէս և այն թուականի մասին, երբ որ այդ կատարուեցա՞ւ։ Եւ շատ անհեթեթ բան կը լինէր, եթէ ամենայն նախադասութիւն միայն մի տեղեկութիւն յայտներ և նորա մէջ բովանդակած բառերից իւրաքանչիւրը յատուկ նշանակութիւն չունենար, աննշանակ լինէր։ Եթէ աւելի ճշտելու մտօք աւելացնենք, թէ նախադասութիւնը ոչ-ենթակայի մասին է ծանուցում տալիս, այս էլ սխալ դաղափար կու տայ առ հասարակ ընդ նախադասութեանց մասին։ Հետևեալ նախադասութիւններում ո՞ր բառը աւելի է հետաքրքրում մեզ. «այս մարդը խիստ յարգելի է, մեր քաղաքի բոլոր բնակիչները պատուում են այս մարդուն, այս մարդուց միշտ կարելի է բարիք սպասել, այս մարդուն անպայման հաւատացէք, այս մարդու արդարամտութիւնը իրա թշնամիքն էլ կը վկայեն, մեր խաղաղութիւնը այս մարդով հաստատուեցաւ»։ Անշուշտ «այս մարդ» դադափարն է, որ նշանակութիւն ունի բոլոր նախադասութիւններում, թէպէտ նա մի անգամ միայն անուն - բայի է, իսկ միւս անգամ խնդիր - սեռի է, յետոյ խնդիր - բնութեան զանազան հոլովներով, վերջապէս մի անգամ էլ—յատկացուցիչ։ Բայց ով որ կարծում է, թէ նախադասութեան գլխաւոր մասը կազմում է ենթական, նորա տեսութեան համաձայն պէտք է ասէինք, թէ առաջին նախադասութեամբ միայն տեղեկութիւն ենք ստանում այս մարդու մասին, իսկ երկրորդով բոլոր բնակիչների, երրորդով բարիքի, չորրորդով՝ ձեր, հինգերորդով արդարամտութեան, վեցերորդով խաղաղութեան մասին։ Եւ այս բանը մենք էլ չենք հերքի, մանաւանդ որ այն տեղ խօսվում է և ուրիշ շատ բանի մասին՝ յարգութեան, հաւատարմութեան, մարդու թշնամիների մասին էս, սակայն եթէ ամբողջ խօսքի դիտումը և գլխաւոր բովանդակութիւնը լաւ կշռենք, բոլոր վեց ասութիւնները վերաբերութիւն ունին առ հասարակ այս մարդուն, որ դովեստներով փառաբանվում է։ Կամ եթէ դատաւորը ինձ հարցնէ. «ի՞նչ ունիս ասելու այն ամբաստանեալի մասին», և եթէ պատասխանեմ. «ես նորա մասին կարող եմ տեղեկացնել, թէ նորան (նո) տեսել եմ այն միջոցին, երբ որ . . .», միթէ

ուրեմն առաւելապէս կամ մասամբ իւիք խօսել եմ իմ անձի՛, իսկ ամբաստանեալի մասին՝ երկրորդաբար կամ բնաւ ոչի՛նչ։—

Վերոգրեալ բացատրութիւնները այն նպատակն ունէին, որ հասկանանք, թէ նախադասութեան կենդրոնը ոչ այլ ինչ է, բայց եթէ բ֊մ֊որ էայն, և թէ նորա մէջ ամենայն բառ խորհուրդ և նշանակութիւն ունի։ Գիմաւոր բայն է այն արմատն ու բունը, որից որ ծլում է ամբողջ ծառը (նախադասութիւնը), որը որ քանի աւելի ոստեր ստանայ (վերադիրներ, լրացիչներ, որոշիչ բառեր), այնքան արտայայտելի իմաստը աւելի լաւ կը ծաղկի, այնքան աւելի կը կենդանանայ։

Այժմ լուծենք «ճնճղուկներ» առակը բացատրած սկզբան համեմատ։

Առաջին նախադասութիւն.

Մի աւերակ վանք, որ բազմաթիւ ճնճղուկներին ապաստան էր տուել, նորոգուեցաւ։

Այս նախադասութեան մէջ ինչի՛ մասին է խօսվում։ Նորոգութեան կամ նորոգուելու մասին։ (Հին ձևով սովորած աշակերտը ի հարկէ կասէ վանի՛ մասին. բայց մի քանի օրինակներով պէտք է ուղղել թերի ըմբռնումը, մինչև որ նա նոր սովորութիւն ստանայ)։ Միթէ ուրիշ ոչինչ բանի մասին չի՛ խօսում, ղոր օր. վանքի, ճնճղուկների, ապաստանի մասին։ Անշուշտ, բայց նորոգութիւնն է այն նոր տեղեկութիւնը, ինչ որ նախադասութիւնը մեզ ծանուցանել է ուզում։

Արդ ի՞նչ նորոգուեցաւ։ Մի վանք։ Գիմաւոր բայի այսպիսի որոշմունքը կոչվում է ենթակայ, իսկ ինքը գիմաւոր բայն, որով որ նորա ենթական իմացվում է կամ յայտնի կերպով (եմ, ես) կամ գէթ հարևանցի ակնարկութեամբ (է), կոչվում է նախադասութեան ստորոգեալ։ Այս տեղ գիմաւոր յանգը (ուեցաւ) ցոյց է տալիս 3-դ դէմք, այսինքն ոչ այն դէմքը, որ խօսում է, և ոչ այն դէմքը, որի հետ որ խօսում են, այլ մի ուրիշ դէմք, որի մասին որ խօսվում է։ Հայերէնում առաջին և երկրորդ դէմքի ենթական նէյտրալ-ընդարձակ նշանակելը շատ անգամ աւելորդ է, որովհետև արդէն ղօրութեամբ իմանալի է (ռուսերէնում աւելորդ չէ. ուրեմն չը պէտք է շփոթել այս երկու լեզուների յատկութիւնները, մանաւանդ ղգուշանալու է, որ հայերէն նախադասութիւնը օտար ձևով չը կազմուի)։

Երբ որ կարիք չը կայ վանք բառը յատկապէս իւր անունով որոշելու միւս վանքերից, ինչպէս որ մեր օրինակումն է, այն ժամանակ որոշում են միայն նորա միութիւնը, առանց այդ միութեան որ և է ղօրութիւն

տալու. այդպէս մասնաւորող՝ բայց անշօր թուական անունը կոչվում է անորոշ ածական կամ մասնական ածական։ Անորոշ թողնուած ժամանակ կարելի չէ ասել ոչ վանէը, այլ ոչ վանէ։

Մեր նախագասութեան մէջ վանքը որոշվում է ոչ միայն ոչ, այլ և ուերակ ածականով։ Գոյականի բոլոր որոշիչ բառերը կոչվում են վերադիր, որոնք գոյականից նախադաս, անհոլով և եզակի են դրվում։

Մենք կարող ենք այսպէս էլ որոշել. այս վանքը (դիմորոշ ը-ով) զարդարած վանքեր։ Ուրեմն չորս տեսակ ածական վերադիրներ կան.

ա. բուն ածական (իրի յատկութիւն ցոյց տուող, ինչպէս մեր օրինակում ուերակ)։ զոր օր. «գեղեցիկ, փոքր, երկաթէ»։

բ. մասնական անուն, մեր օրինակի մէջ ոչ։

գ. դերբայ, այսինքն բայից ածանցող ածականներ, զոր օր. շինած, քանդած, կանգնած,—շինող, քանդող, կանգնող, (իսկ շինածը, շինողը—գոյական են)։

դ. դերանուն, զոր. օր. «այն, որ»։ Ա յս կարգին են պատկանում բոլոր ածական դերանուններն (ցուցական, ստացական) և դիմորոշ յօդերը (ս, դ, ն կամ ը) իրանց պէսպէս դործածութիւններով։

Արդեօք գոյականները չէ՞ն կարող ուրիշ եղանակներով ևս որոշուիլ կամ բացայայտուիլ ստանալ։ Մի նոր գոյականի միջնորդութեամբ, զոր օր. քաղաքի վանքը, բլրի վերայի վանքը։ Էլ ուրիշ ոչ մի կերպ։ Ա չ. որովհետև զոր օր. մակբայի միջնորդութեամբ չի կարելի ասել՝ վանքն այն տեղ, այլ ածականով՝ այն տեղի վանքը։ Ուրեմն կան երկու տեսակ վերադիրներ՝ «ածական» և «գոյական» վերադիրներ։

Մենք կարող ենք նախադասութեան բառերի կախումը միմեանցից գծերով պատկերացնել, այն է իշխող բառից մի գիծ քաշելով դէպի վար, որի ծայրին իրա որոշիչ բառը կը գրուի. կամ կարելի է բառերի փոխանակ նշանակել իրանց քերականական անունները. (դիմաւոր բայից դէպի ձախ գնացող գիծը ցոյց է տալիս ենթակայի որոշիչ մասերը, իսկ ալ գնացող գիծը՝ բայի որոշիչները)։



Ա յս օրինակում ալ կողմը ուղղուած գիծ չը կայ, որովհետև բայի բնութիւնը (բովանդակութիւնը) ուրիշ ոչինչով որոշուած չէ։—

Բայց վերևի ողջ նախադասութեան մէջ ուրիշ բան էլ է ասած. «որ բազմաթիւ ձնձղուկներին ապաստան էր տուել»։ Արդեօք դա ինքնին և անկախ կերպով հասկանալի՞ է։ Ոչ։ Ուրեմն դա է լոկ միայն որոշող մասն։ Ի՞նչ է որոշվում դորա միջնորդութեամբ։ Մի վանք։ Դա ի՞նչ տեսակ որոշիչ է, արդեօք ած ական՞ն թէ գոյական վերադիր է։ Դա մի նախադասութիւն է։ Ինչո՞ւ։ Որովհետև այդ խօսքի մէջ դիմաւոր բայ կայ, այն է՝ տուել էր։ Ո՞վ կամ ինչն էր տուել։ Վանքը (այսինքն՝ այն վանքը, որի մասին որ խօսք եղաւ. ը դիմորոշ յօդը այդ նշանակութիւնն ունի)։ Բայց նախադասութեանդ մէջ վանք բառը դրուած չէ։ Ինչ միջոցով է արտայայտուած նորա մէջ վանքը։ «Որ» բառի միջնորդութեամբ։ Ուրեմն այս տեղ գոյական անուան փոխարէն ենթակայի պաշտօն է կատարում դերանունը։ Ի՞նչ էր տուել վանքը։ Ապաստան։ Այս բառի ձևն ի՞նչ է։ Սա կարող է լինել եղակի ուղղական կամ հայցական, բայց այս տեղ հայցական է։ Եւ ինչո՞ւ ոչ ուղղական։ Որովհետև նորա փոխանակ ես կարող էի ասել «ապահով ապաստան» և ոչ «ապահով ապաստանը», որ աւելի ուղղականի ձևը կըլինի։ Շատ անգամ ուղղականն էլ առանց ը յօդի է նշանակվում, և այն ժամանակ հայցականն ու ուղղականը կարող են շփոթուիլ. լեզուն այդպիսի շփոթութեանց առաջն առնելու համար նախադասութեան մէջ բառերին սահմանել է որոշ կարգ։ Հաւատոյն կարգը այս է. նախ ուղղական (ենթակայ), ապա հայցական (խնդիր - սեռի)։ Ուրեմն տեսանք, որ դիմաւոր բայն որոշվում է հայցականով։ Արդեօք հայցականը միայն 3-դ դէմքն է որոշում։ Ոչ, նա կարող էր որոշել նոյնպէս և այս ձևերը «տուել էիր», «տուել էի»։ Եւ յատկապէս ինչ է որոշում դա։ Բայի բովանդակութիւնը, տալը։ (Մեր բայն երկու որոշում ստացաւ. «ո՞վ էր տուողը, ինչ էր տուել»)։ Եթէ նախադասութիւնը կրաւորական ձև ստանայ, այն հայցականից ի՞նչ կը կազմուի։ Ենթակայ—«ապաստանը տրուեցաւ ձնձղուկներին»։ (Ամենից լաւ նշանը այս է հայցականը ճանաչելու համար)։

Այսպիսի հայցականը, որ բայի բովանդակութիւնն է որոշում և կրաւորական փոխուելով ենթակայ (ուղղական) է դառնում, կոչվում է նախադասութեան խնդիր - սեռի։

Ո՞ւմն էր տուել վանքը ապաստան՝ ձնձղուկներին։ Սա տրական է։ Ուրեմն բայի բովանդակութիւնը կամ զօրութիւնը տրական հոլովով էլ աւելի ևս կարող է որոշուիլ։ Այդպիսի տրականը նոյնպէս կոչվում է խնդիր, բայց խնդիր - բնութեան։

Իսկ ուրիշ հոլովներով չի՞ որոշուած։ Մեր բայն՝ ոչ, բայց ուրիշ բայերը որոշվում են։ Ձոր օր. սեռականով՝ «հրամանը խլեաւին է», «հօր ունեցածը որբ-որդը կը համարուի», բացառական՝ «եկբ՛ըլցո լսեցի», «բան-

ոչ փախան»։ գործիական՝ «դրամով կաշառեց»՝ «հրացանով խփեց»։ Նաև նախադրութիւններով՝ «թարգմանի հետ խօսեցի»՝ «տաճարի մէջ գտնուեցաւ»՝ «ժամանակով ամէն բանը կը փոխուի, մենք էլ ժամանակի հետ»՝ «գնացի մինչև իջևանը»՝ «նոցա վերայ կասկած ունին»։ Ե՞լ ինչ միջոցով կը որոշուի։ Մակբայով։ «նստած եմ անյարմար, երթիկ եկաւ»։

Ինչո՞վ է գանազանվում «որ բազմաթիւ ճնճղուկներին ապաստան էր տուել» միջանկեալ նախադասութիւնը՝ գլխաւորից։ Կիսակատար իմաստով, որ որքան յաւելուածներ ստանայ՝ ինքը առանձին առած՝ միշտ անբաւարար ձև կունենայ և իւր կիսակատար միտքը չի ամբողջանայ։

Թէպէտ հետևեալ նախադասութիւնն էլ անկատար իմաստ է արտայայտում՝ «մանուկը առաւ»՝ բայց եթէ վերան աւելացնեմ որոշիչ մասեր, ղոր օր։ «ինձանից իմ գիրքը»՝ այնուհետև նախադասութիւնը լիովին հասկանալի կը լինի, եթէ դիտենամ, թէ ո՞վ է խօսողը և ո՞ր մանուկի ցուցումն է անում ցուցական ը յօդը։ Իսկ մեր նախադասութիւնը ինչ բառերով էլ որ զարդարենք, իւր յատուկ կազմութեան պատճառով մի բաւարար իմաստ լնաւ չի ստանայ, ղոր օր։ «որ շատ տարի շարունակ դուարթաբարոյ ճնճղուկներին ապահով ապաստանութիւն էր տուել»։

Ա յսպիսի նախադասութիւններ կոչվում են յարաբերական (տեղին նայելով նաև միջանկեալ)՝ իսկ գլխաւորը՝ յարաբերեալ։ Նոքա սկսվում են կամ յարաբերական դերանունով (որ) կամ շաղկապներով (որովհետև, եթէ, մինչդեռ)։

Ա յսպիսի երկրորդական նախադասութիւնները, արդեօք գլխաւորից առաջ կամ յետ կարգուած լինին, կամ թէ միջանկեալ լինին, ինչպէս որ մեր օրինակում է,—միշտ գլխաւոր նախադասութեան որոշողի արժէք ունին։ Մեր օրինակումն երկրորդական նախադասութիւնը ենթակայի վերադրի պաշտօն է կատարում, այն ևս ածական վերադրի պաշտօն։ Եթէ այդպէս է, ապա ուրեմն մենք պէտք է կարողանանք բառերը այնպէս միաւորել, որ երկրորդական նախադասութիւնը ածական վերադիր դառնայ, ինչպէս որ այդ երևոյթը տեսնում ենք հետևեալից՝ «մի ապաստան տուող, աւերակ վանք» կամ որ գոյական վերադիր դառնայ «մի աւերակ վանք, ճնճղուկների սիրելի օթևանը»։ Միթէ կարելի չէ՞ այդպիսի փոփոխութեան մէջ պահպանել երկրորդական նախադասութեան բառերը։ Անշուշտ։ «բազմաթիւ ճնճղուկներին ապաստանութիւն տուող մի հին վանք»։ Բայց այս ձևով խօսքը ծանր և ճապաղ է դառնում, մանաւանդ միշտ էլ հնար չի լինում երկրորդական նախադասութեան բառերը նոյնութեամբ պահպանել։ Ղոր օր։ «այս մարդը, որի մտերմութեան որ հաւատում եմ»։ Սորա իմաստը նոյնութեամբ յայտնելու համար՝ ո՞չ ապաքէն կը ստիպուինք ղոր օր։ հետևեալ նոր ձևակերպութիւններով խօսել՝

ա) այս իմ փորձած մարդը*), բ) այս մարդը, իմ անխարդախ (վստահելի) խորհրդականը։ Երբեմն երկրորդական նախադասութիւնը այնպէս կը փոխուի, որ այնուհետև գլխաւոր նախադասութեան բառերը որոշէ սեռական հոլովով (յատկացուցիչ դառնայ) կամ այլ հոլովներով և նախադասութիւններով. ուրեմն միշտ իբրև մի վերադիր ձևանայ։ Ուստի կարող ենք այդպիսի նախադասութիւնները վերադիր նախադասութիւն ևս կոչել։

Պարզ սքեմը բարդ նախադասութեան
(գլխաւորի և յարաբերականի).



Երկրորդական նախադասութեան այն բառը, որով գլխաւորն ու երկրորդական նախադասութիւնները իրար հետ միանում են (որ), ի հաշիւ ենք առնում, բայց պատկերի մէջ գծով ցոյց ենք տալիս, թէ յարաբերական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան ո՛ր անդամի (ենթակայի) որոշումն է կազմում։

Ուշադրութեամբ պէտք է դիտել պատկերից, թէ ինչպէս գլխաւոր նախադասութեան միայն ենթական այնքան զանազան որոշիչներ է ստացել, մինչդեռ ինքը բայն (բայի բովանդակութիւնը) զուրկ է մնացել այդպիսի բացայայտութիւններից։

(Շարունակելի) Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ.

(*) Շատ քիչ լեզուս կայ, որ բառերը այդպէս միացնէ, ինչպէս հայերէնն է անում. իմ փորձած մարդը, իմտեսած անասուն, իմ այցելելու գաղաչները—լեզուի կանոնով են ձևակերպած եւ իրաւամբ ասում ենք այդպէս. թէպէտ ոչ մարդը իմս է, ոչ անասունը եւ ոչ գաղաչները. սակայն լեզուի սովորութիւնը այդպէս է հաստատել։

ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

(Շարունակութիւն և վերջ)։

ԺԳ.

ՏԻԿՈՒՆ.

Խճկօնից (Բէշքիլիսա) դէպի հարաւ արևելք համանուն գետի վերայ, մօտ երեք վերստ հեռաւորութեամբ գանւում է Տիկուն գիւղը, որի բնակիչներից մի մասը հայ, մի մասը մահմետական են։ Տիկունը նախիջևանի գաւառակի (հին Արշարունիք) կենդրոնն է, այդ տեղ է գաւառական վարչութիւնը։

Տիկունում գանւում է Ս. Երրորդութիւն կոչվող հին փառաւոր, հայակառ և իր տեսակում ինքնուրոյն ճարտարապետութեամբ վանքը։

Վանքը ճապաղ դիրք և տեսք ունի. քայլ արևելեան կողմից ունեցել է սիմնադարդ սրահ, աների խոյակները և կամարների զարձուածների հետքերը դեռ նկատւում են։ Վանքը շրջանակի ունեցել է աւտիճաններ, այժմ միայն հիւսիսային կողմն է քայլ։

Այս փառաւոր տաճարի հարաւային որմը և տանիքը քայքայուած են։ Եկեղեցու միջին հարաւային կողմի աները նստած են և կամարներն էլ խախտուած, այս իսկ պատճառով ահագին տարի է զադարած է ժամերգութիւնը։ Շրջակի ամենահին եկեղեցին է այս. եկեղեցւոյս շինողն է Սահակ կամսարական. շինուած է Յովհան կաթուղիկոսի օրով։ Հ. Ալիշան համարում է Սահակ կամսարականը Ներսէհ և Հրահատ կամսարականների եղբայր։ Եթէ յիրաւի, Հ. Ալիշանի ենթադրութիւնը սուղիզ է, այն ժամանակ եկեղեցու շինութիւնը հասնում է Ե-րդ դարին։

Տիկոռը յիշվում է 724 թուին, երբ Վաղարշապատի ժողովում, ըստ առելոյ Յովհաննէս ոսկեբերագիր, Յովհան Օձնեցին Տիկոռեցի Յովհաննէսին ի կրօնս մոլորեալ լինելոյն համար մերժում է: (Շիրակ եր. 135)· Տիկոռի Ս. Երրորդութիւն վանքը համարեա ծածկուած է արձանագրութիւններով, որ ապացոյց է նորա հռչակին և ճոխութեանը:

Տիկոռի եկեղեցին կործանմանից ազատելու համար, և այդ ամենահին տաճարը իւր յատուկ ճարտարապետութեամբ որպէս նմուշ պահպանելու համար հոգս և խնամք պէտք են: Վանքիս յատկացրած է 286 դեսիատին հող, որից 100 դեսիատինը վարելահող է, 160 դեսիատինը՝ արօտատեղի, իսկ 26 դեսիատինը՝ անյարմար: 1888 թուի աշնանից հողը յանձնուեց հոգևոր իշխանութեան: Հողը կոչվում է «Հասան—ջան» և այժմ կապալառուած է:

ԺԴ.

Ս. Սթեփաննոսի վանք Ախթալոյ.

Խծկօնից վանքից դէպի արևմուտք Տիկոռի գետի ալ ափին բարձրաւանդակ լեռնագագաթի վերայ, Խծկօնից մօտ մի վերստ հեռաւորութեամբ գտնվում է Ախթալայ հայաբնակ գիւղը, որ ըստ աւանդութեան՝ Անեցւոց ամուրանոցն է եղել: Գիւղի հարաւային կողմը գտնվում է մեծ մեծութեամբ գմբէթաւոր Ս. Սթեփաննոս եկեղեցին: Շինութեան թուականը յայտնի չէ, սակայն վրկէն հազարամեակից առաջ պէտք է շինուած լինի, որովհետև արդէն Հայոց ՆԾԵ (1006) թուականը կրոյ արձանագրութիւն ունի: Առաքառակաւորների երկիւղից՝ եկեղեցու լուսամուտները փակուած լինելուն համար եկեղեցու մէջը խոնաւ և մութ է· դուռը դէպի հիւսիս է բացվում, մի այլ եկեղեցոյ աւերակի հանդէպ, որի միայն սահմերն են մնում: Եկեղեցու արևմտեան կողմն է գիւղի ընդարձակ և շատ ընդարձակ ու խիտ գերեզմանոցը: Ափսոս ժամանակ չեղաւ հնագոյն գերեզմանների մի քանիսի թիւը վեր առնել, և

այսպէս աստիճանաբար մինչև մեր ժամանակը, որպէս զի հնար լինիլը իմանալ թէ երբ և իչպէ գիւղն ամայացել է, և որ դարից սկսեալ կամ ո՛ր դարու գերեզմաններ կան։

ԺԵ.

Մրէն (Ղ.ՃՐՔՈՂ).

Ագարակից դառնալով դէպի Տիկոռ, և Տիկոռի գետը անցնելով՝ հինգ ժամու չափ ճանապարհ գնալուց յետոյ, թողնելով Ալոյի—Մաւրակ (յանուն Մօրիկ կայսեր շինած և Շիրակայ Մաւրակից ջոկուելու համար Ալոյի) կոչուած գիւղը, որի հին մարտկոցը այժմ եկեղեցի է փոխուած, մենք հասանք Մրէնու անապատը։

Մրէնը գտնւում է Ախուրեան և Տիկոռի գետերի միջև հարաւ արևմուտքում մի սրածայր վերջացող եռանկիւնակի վերայ. որ կազմում են երկու գետերը խոր ձորի մէջ միմեանց հետ միանալով։

Մրէն եթէ քաղաք չէր, բայց մեծ քաղաքագիւղ եղել է. որի ապացոյց են այգիների ցարդ մնացած ցանկերը, տների որմերը. որբատաշ քարով շինած մատուռներն ու ապարանքները, և որ ամենից նշանաւորն է՝ Մրէնի Հոյակապ, փառաւոր և վայելչանիստ կաթուղիկէն, Անւոյ կաթուղիկէից քիչ փոքր։ Ինչպէս Մրէն, նոյնպէս և Տիկոռի Ս. Երրորդութիւն տաճարների արևելեան կողմից խորանի տեղը քիչ դուրս ընկած է. այսպէս էր և էջմիածնի տաճարինը։ Մինչդեռ Բագրատունեաց ժամանակի եկեղեցիք այդ դուրս ընկածը չունին, այլ ուղղագիծ են։

Մրէնի կաթուղիկէն հեռուից բաւականաւոր է երևում. գմբեթը կանգուն է. շինութիւնը խորխոտ, բայց երբ մօտենում ես տեսնում ես հնութեանց երկու թշնամիները՝ ժամանակն իւր արհաւիրքներով և մարդը իւր կործանիչ ձեռքով բաւական վնասս են հասցրել։ Ամայութեան ժամանակ փառաւոր կաթուղիկէն ոչխարի փարախ է դարձած եղել. իսկ ոչխարի քակորը

մաքրելու համար դիւրագին միջոցն է եղել այրելը և այսպիսով եկեղեցու յատակի քարերը և սրմերը միմի կողմից երկու արշնաչափ թրձուած են, ի վնաս քարի և կրի ամրութեան, գրսի կողմից ևս քարեր պոկուած են։ Երևի սրանից հիմքը թուլանալով ամբողջ հիւսիսային սրմը արևմտքից արևելք կամարներից անցնելով պատռուած և բաժանուած է շէնքի մարմնից։ Եկեղեցին արտաքուստ՝ ցաւալի և սրգահատելի է իսկ ներքուստ՝ պատկառելի և ահարկու։ Բեմի տակը դարան է եղել կամարակապ և այժմ ճակատը փուլ եկած լինելով դարանը բացուած է։

Մրէնը այժմ իսկապէս անապատ է և գողազարան, որովհետև գիւղօրայք բաւական հեռի են։ Ջմեռն միայն սակաւ կենդանութիւն է լինում, որովհետև շրջակայ գիւղօրայք իրանց ոչխարները բերում են այդ տեղ որպէս ձմերանոց արածելու։ Մրէնը Երրակի բարձրաւանդակի ամենացած տեղն է և ծայրը, հետևաբար հաղիւ Աշտարակի բարձրութիւնն անեղնալով բաւական տաք կլիմայ ունի, որ յարմար է այգեգործութեան և այն ամեն ներմուծանութեան, որ կարող է Արարատեան դաշտը հասցնել։ Ժամանակին Մրէնը ունեցել է ջուր, որ հոսել է Տիկոռայ գետակից, բայց այժմ ի հարկ է խափանուած է։ Մրէնը կարող է շէնանալ միայն այնպիսի ժողովրդի ձեռքով, որ սովոր է արուեստական ոռոգմամբ իւր ցանքից արդիւնք ապահել. սրանից մի քանի տարի առաջ պարսկաստանի գաղթական բեզաքլուեցիք փորձ արել են, բայց իրանցից անկախ պատճառով գլուխ չեն հանել։ Նոքա որոնք սովոր են իրանց ցանքը ցանելուց յետոյ։ Աստուծոյ կամքին յանձնել մինչև հնձելը, նոքա չեն կարող Մրէնից օգտուիլ, որովհետև նախ որ, ինչպէս ասացի՝ կլիման բաւական չոր և տաք է. երկրորդ՝ հողը կրային լինելով խոնաւութիւն չէ պահում, հետևաբար անջրդի ցանք այնտեղ չի կարող լինել։

Մրէն մեր պատմութեան մէջ յայտնի է և դարից. երբ այդ տեղի Խորէն քահանան, Ղևոնդ երէցի և Վաղարշապատու եպիսկոպոսի քահանայի հետ գնաց Վարդանին համոզելու, որ նա

ազգը ճգնաժամի մէջ չըթողնէ ու գնայ Յուհաննան, այն ժամանակ, երբ Վարդան կամենում էր խոյս տալ Յուհաննան՝ Պարսից հալածանքից պրծնելու համար:

Մրէնի կաթուղիկէն շինել է Դաւիթ Սահառունին եօթներորդ դարում Փրկչի 613 թուին. որով Տիկոսից յետոյ հին եկեղեցին Շիրակայ է Մրէնի կաթուղիկէն: Մրէնի կաթուղիկէն զանազան ժամանակներում նորոգութեան է ենթարկուել ինչպէս երեւում է բազմաթիւ արձանագրութիւններից: Վերջին արձանագրութիւնը վերաբերում է Հայոց ՉԽԴ (1295) թուին:

Մրէնի աւերակների մէջ նկատւում է մի տպարանքի աւերակ. ժողովուրդը աւանդութեամբ անուանում է այդ աւերակը Վարաքեահի տարայ, թերեւս Սահառունիք Վարաքեահեայ դարձած լինին ժողովրդական զրոյցներում:

Հոգևոր իշխանութիւնը բաւական ժամանակ է որ ձգտում էր Մրէնի կաթուղիկէն մարդաբնակ դարձնել իրրև մի վանք, բայց այդ յոյսից այժմ վրիպեալ պէտք է համարել. շնորհիւ Ալէքսանդրապօլցի ամէն տիրացու Յակովբի, որ տարիներով հոգևոր իշխանութեան հաւատացրել էր թէ ինքն իբրև Մրէնի միաբան չէնորել է վանքը, բայց երբ եկած էր օրը երբ պիտի որոշուէր Մրէնի բաղդը նորան և այլ հոգ յառակացնելու նախապատրաստութեամբ, այդ օրը յայտնուեց որ Մրէնը նոյն աւերակն է ինչ որ գարեր առաջ և տիրացու Յակովբը, աչքի առաջ ունենալով որ հոգևոր իշխանութիւնը չէ կարող հետամուտ լինել և առաջել իւր առածները, Մրէնի համարեա անմատչելութեան պատճառով, խոթել է հոգևոր իշխանութեանը, միայն հոգևոր կոչումն ստանալու յուսով:

Ա. Զ.

Բաֆարան.

Բաղարան գիւղը գտնւում է Ախուրեանի ձախ ափին լեռնակներով շրջապատած մի փոսորակի մէջ, և գտնւում է Մրէնից

գետի հարաւ արեւմուտք երկու ժամու հեռաւորութեամբ։ Ճանապարհը Մրճնից դէպի Բագարան Ախուրեանի ափով քաղաքացի դժուարագնաց է և միայն հեծի կարելի է գնալ. բայց տեսարանը հիանալի է։ Անդնդախոր ձորի միջով հանդարտիկ հոսում է Ախուրեանը երկու կողմից սեղով և եղեգնով եղերաւորուած. ձորը մանաւանդ աջ կողմից ուղղաձիգ ահագին բարձրութեամբ պարապած է ժայռերով, որոնք տեղ տեղ գլանաձև վերեւից վայր են իջած և սիրուն տեսարան են ներկայացնում։ Հայատառները լեռնոտ երկիր լինելով՝ ձորեր անհամար են, բայց Բագարանի ձորը աննման է։ Բագարանը գտնվում է փոքր ինչ ընդարձակ գոգաւոր տարածութեան վերայ հայաբնակ գիւղը, և տեղւոյն հայերը հռչակ ստացած են որպէս քաջասիրտ մարդիկ։ Բագարանը Բագրատունեաց՝ և նոցանից առաջ՝ կամսարականների ոստանն էր, հետևաբար և ամեն քայլափոխի վերայ հնութեան հետք կարելի է նշմարել։ Գիւղից դէպի հիւսիս բարձրանում է լեռան մի ոստ քաւական բարձրութեամբ. այդ ոստը, որ նման է կարսի միջնաբերդին՝ եղել է Բագարանի միջնաբերդը. և այդ միջնաբերդի արևելեան ստորոտին վերայ շինուած է Բագարանի հռչակաւոր Ս. Գէորգ մատուռը, որ համբաւաւոր ուխտատեղի է։ Հին Բագարանը եղել է միջնաբերդի հարաւային ստորոտում՝ գտնվող փոսորակի մէջ, բայց այդ տեղը անյարմար լինելով քնակութեան համար, որովհետև չորս կողմից թէ անձրևաջրերը և թէ ձիւնի հալուածքը այդ տեղ է լճանալիս եղել, ամայացել է. բայց քրիստոսութեանց ժամանակ երբ ժողովուրդը սակաւանում է, այդ սակաւաթիւ ժողովուրդը պատապարվում է միջնաբերդի փոքրիկ տարածութեան վերայ. այժմ թողնելով միջնաբերդը, և հին Բագարանի տեղը գետափի զառ ի վայրի վերայ են շինել տները, բայց չունենալով եկեղեցի, գարձեալ Ս. Գէորգի մատուռի մէջ են կատարում ժամերգութիւնը։ Յայտնի չէ թէ ո՛ր ժամանակ է շինուած այս մատուռը, բայց հաւանական է որ Ց-րդ գարու գործն է. մատուռի քիւրը մարմար է եղել, որ ցայսօր էլ կայ։

Բագարանի գերեզմանոցը գիւղի մէջ է և գերեզմանոցի և գիւղի մէջ կայ եկեղեցու աւերակ, որից միայն մի պատն է մնում, բայց այդ պատն էլ ցոյց է տալիս թէ եկեղեցին բաւական ճարտարաշէն և նուրբ մի շինուածք է եղել։

Գիւղի հանդէպ Ախուրեանի ձախ ափին վոտքրիկ բարձրաւանդակի վերայ գտնվում է մի սիրուն մատուռ Ս. Շուշան անուն, դարձեալ Բագրատունեաց գործ. Բագարանից ներքև այգիների մէջ երկու եկեղեցիք կան կիսաւեր, մէկը համարվում է Բագրատունեաց Հանգստարան։

Նայելով Բագարանի անուան, հեթանոսական պաշտամունք տեղի է եղել. ուրեմն իւր գոյութեամբ մեր հեթանոսական ժամանակին պատկանում։ Ծողովուրդը թէև քաջ, բայց ծոյլ է և ինչպէս աւհասարակ վանքերի կամ ուխտատեղիների մօտիկ ժողովուրդն է, յոյսները դրել են ուխտաւորներից ստացուելիք արդիւնքի կամ շահի վերայ։ Աւազոյ միայն այգեգործութեամբ էին պարապում, բայց այժմ Ռուսաց սիրապետութեամբ երկիրը խաղաղելուց յետոյ դուրս գալով իրանց ձորերից՝ սկսել են երկրագործութեամբ էլ պարապել։ Մեզ շատ դժուարին եղաւ համոզել ժողովրդին որ գիւղին մօտ յատուկ եկեղեցի ունենան, ու ազատուին այն ահագին և անտանելի դժուարութիւնից որ կրում են Ս. Գէորգ գնալով, որ կէս վերստից աւելի հեռի է և դժուարակոխ սարի վերայ է։ Ծողովուրդը արտաքուստ ջերմեռանդութիւն է կեղծում, բայց ներքուստ աչքի առաջ ունենալով այն շահը, որ ունի ուխտաւորներից՝ չէ կամենում ձեռք վեր առնել այդ վոտքրիկ մատուռից, որ բացի դժուարագնաց լինելը իւր վոտքրութեամբ անկարող է բովանդակել յիսունից աւելի մարդ։ Ի վարձ անտի դպրոցական շէնք ունին գիւղից դարձեալ բաւական հեռի, բայց դպրոց չունին։

ԺԷ-

ԿԱՂԶՈՒԱՆ.

Կաղզուանը թէ հնուէմն և թէ նորուէմ մի աւան էր և է, և գանվում է Երասխի ձախ ափին մի ժամ կամ մօտ վեց վերստ հեռաւորութեամբ և այս ամբողջ տարածութիւնը բռնում են գաղզուանի այգիքը։ Կաղզուանը հնուէմն Երասխաձորի և այժմ համանուն գաւառի կեդրոնն է. բնակիչներից մեծագոյն մասը ատիկ են, իսկ փոքրագոյն մասը մօտ 250 տուն քրիստ և 100 տանից էլ աւելի եկաւոր հայք են։ Նշանաւոր հնութիւններ չունի։ Կաղզուանի ազահանքը որ աւանից հիւսիս արևմուտք է գանվում թէպէտ չէ կարող մրցել Կոլբին հետ, բայց նորա-նից էլ շատ պակաս չէ։ Ժողովրդից քրիստոնեքը հայ թէ թուրք պարապում են մեծ մասամբ այգեգործութեամբ, որով հայ-թայիում են իրանց տարեկան պահպանելով շրջակայ գաւառները և յատկապէս Կարս։ Որովհետև կանոնաւոր ճա-նապարհներ չկան, տեղափոխութեան միակ միջոցն են էշերը, որ շատ բազմաթիւ են Կաղզուանում, և Կաղզուանցիք չկա-մենալով էլ բառը գործածել, որ իրանց կարծիքով անվայել է լսելիքին, Փալա՚ն են կոչում։

Բնիկներից արհեստով և վաճառականութեամբ էլ պարա-պուններ կան, բայց սակաւաթիւ են։ Վաճառականութեամբ և կապալով (ազահանքի և տեղական գնտի պահպանը հայերն հայերեն) պարապում են եկաւորները, որոնք Ալէքսանդրօպոլից են առաւելապէս։

Կաղզուանցի հայք ունին մի ազգային և մի աղջկանց հոգևոր ճեմական միդասեան դպրոց։ Դպրոցական շէնքերը անմխիթար և դպրոցների եկամուտները անգոհացուցիչ և յուսահատական են։ Ժողովուրդը տաճկաց բռնութիւնից յետոյ նոր սկսք քանալով մի-անգամայն կարիք է զգացել դպրոցների և նոր եկեղեցու շինու-թեան։ Երկուքն էլ մեծ ծախքեր են պահանջում և այդ ծախքը գոգալն դժուարին է։ Կաղզուանը իւր այգիներով բարձրա-

Սանդալի վերայ լինելով գեղեցիկ տեսարան է ընծայում մարդու։

ԺԸ.

ՂԱՐԱՎԱՆ.

Կազդուրանից մի և կէս ժամու ճանապարհ հեռաւորութեամբ դէպի արևմուտք մի ափսփայ բարձրաւանդակի վերայ գտնվում է Ղարավանք հայաբնակ գիւղը։ Այս գիւղի մէջ կից միմիանց իննուց շինուած եկեղեցիներ կան, որոնք է որ բոլորովին կործանուած են, է որ քայքայուած մնացել, մնայլ և խոնաւ լինելուն համար անյարմար ժամերգութեան, այս իսկապատճառով ժողովուրդը նոր եկեղեցի է շինել, որ մնում էր միայն ծածկել։ Հին եկեղեցիք սրտմտեցուցիչ են շինուած եղել, այս պատճառով էլ Ղարավանք են կոչուել գիւղի հետ միասին։ Հին եկեղեցիք ժ-րդ դարուց ուշ չեն շինուած։ Ղարավանքից դէպի հիւսիս ակնապարար լայն ձորի մէջով հոսում է Մայր Արաքսը, որի ձախ ափին քարաժայռի վերայ գտնվում է Զանկլիի բարձրադիրակ վանքը։

ԺԹ.

ՎԱՐԴԻ ՀԵՐ.

Ափսփայ բայց կանաչուտ ծորձորներից անցնելով դէպի հարաւ Ղարավանքից երեք ժամու հեռաւորութեամբ բարձրաբերձ լեռների միջև մի գոգաւոր հովտում գտնվում է Վարդիհեր ուխտատեղին, որ Տաճկաց սահմանակից է։ Հովիտը իւր վտակներով դէպի հիւսիս, դէպի Երասխ, ձգուելով կազմում է նախնեաց Վիշապաձորը։ Վարդի հերի հովիտը և Վիշապաձորի վերի մասերը լեռների և բլրակների ծմակները անտառուտ են։

Իմ հանդիպելը Վարդիհերում սլատահից յունիսի 1-ին և

այդ ժամանակ դեռ ձիւնը բոլորովին վերջացած չէր. սարսափելի ցուրտ, խոնաւ և անձրևաբեր գիշեր անցրինք. Վարդի հէրի եկեղեցին այժմ շինուած է օրօրօցաձև մի փոքրիկ գաւառեան գաւիթ վերայ, բայց հին եկեղեցին և միաբանից բնակարանները գտնվում են գէպի արևելք, որոց միայն հիմքերն են յայտնի: Վարդհէրին իւր ամբողջ սրբավայրերով նուիրեալ է Թաթևոյ և Վարսաի: Նայելով Կարսայ և Ալէքսանդրօպոլի ժողովրդոյ անուններին, որոնց մէջ բաւական շատ Թաթուլ և Վարոս կան, (ժողովուրդը Թաթոս Վարոս է կոչում) յայտնի կարելի է հնարաւորել թէ որքան ջերմեռանդ են գէպի այս ուխտատեղին: Այժմեան և հին մատուռից գէպի արևելք մի ժայռի կողքին բացուած անձաւը, որի մէջ ջուր և կայ կոչվում է չարաչարանք և համարվում է Թաթևոյ և Վարոսի ճգնարանը. ջերմեռանդն ուխտաւորները բոկոտն մագլցելով բարձրանում էին գէպի անձաւը իրանց ուխտը անելու չարչարանաց տեղում: Տեսնելով տանջանքը որ կրում էին բարձրացողները և աչքի առաջ ունենալով երիւնը, որ կաթել է մի փոքրիկ անզգուշութիւն առաջ բերել սայթաքելով և վայր գլորուելով, և մանաւանդ մի կնոջ տագնապը, որ կամենում էր բարձրանալ և ինչ ճանապարհին գիմ էր առել ու չէր կարողանում առաջ գնալ, առաջարկեցի տանդուլներ շինել կամ փորել նոյն իսկ ապառաժի լանջքին մինչև անձաւը, որպես դի դիւրաբերութեան համար. բայց իմ այս առաջարկութիւնը ուխտաւորների կողմից ոչնճարութեան արժանացաւ: Որովհետև նոքա իրանց ուխտագրութեան լիակատար բաւականութիւնը համարում էին դժուարութիւնը, որ նոքա կրում են վեր, գէպի անձաւը բարձրանալու: և սկսեցին թուել այն բոլոր գէպքերը, երբ բարձրացողները վայր են սայթաքել և ոչ մինչ մնաս չեն տեսել:

Վարդհէրից գէպի հարաւ արևելք գտնվում է երկճեղք մի լեառն չորս վերստ հեռաւորութեամբ մինչև կատարը, այս լեառն կոչվում է Ս. Մամասայ սար. ուխտաւորներից շատերը շտապում են և այդ տեղ իրանց ուխտը կատարելու. ուր

բարձրանալ կարելի է դարձեալ հետի և բոկոտն:

Վարդիվերն ունի երեք ուխտ՝ Վարդավառ, Ս. Աստուածածնին և Վարագայ խաչ. այդ ուխտերին բաւական ժողովուրդ է խառնվում Վարդիվերում կաղղնանի շրջակայքից և Ալաշկերտից: Որովհետև վանահայր չկայ, հետևաբար և արդիւնքն էլ աննշան է լինում: Համբարձմանն էլ միայն կաղղնանցիք են գնում Վարդիվեր աւելի +էջ անելու և անուռից ձրիաբար մի քանի իշաբեռ փայտ բերելու քան ուխտ անելու. ես և 1888 թուի Համբարձմանն գտնուեցի Վարդիվերում:

Ուխտերից գոյացած արդիւնքը լաւ հսկողութեամբ մօտ 200 րուբ. կարող է լինել, բայց լաւ հսկողութիւն պրտերից և ջեմ ձեռքով ունենալ. սովորաբար 120 րուբլուց աւելի չէ լինում: Վանքին կամ ուխտատեղուն յատկացրած է 1250 դեսիատին հող, որ միայն արօտատեղի կարող է լինել. և անուռից կարելի է օգտուել, եթէ ճանապարհներ լինէին: Այդ հողն յանձնուեց հոգևոր իշխանութեան անցեալ 1888 թուի յունիս ամսին: Առ այժմ ոչինչ օգուտ չէ բերում հողը:

Ահա Կարսի վիճակի իմ տեսած և նշանաւոր հնութիւնների մասին համառօտ ամփոփումն որ կազմեցի, մեծապէս օգտուել եմ Հ. Ալիշանի Շիրակից և առաջնորդէս Հ. Ներսէս Սարգսեանի տեղագրութիւնից, որ աւելի հետաքրքիր է. վասն զի անձամբ տեսել, քննել և ուսումնասիրել է. մինչդեռ Հ. Ալիշան ուրիշներից քաղելով առանց տեղումը տեսած լինելու, տեղ տեղ բաւական խոշոր սխալներ է անում, որ հարկ չը համարեցի մատնանիշ լինել, որովհետև նպատակս չէր նոր տեղագրութիւն կազմել կամ վերաստուգել, այլ եղածներից տեղեկութիւնները ամփոփել:

Այսքան վիճակիս հնութեանց մասին խօսելուց յետոյ մի համառօտ տեղեկութիւն էլ արդի դրութեան մասին մի յարմար դէպքում:

Ց. Վ. Մ.

Օգոստոսի 31 1889 ամի.

Կաղզուան:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ

(Շարունակութիւն)

Խե.

Սուրբ կարապետ և Փոկաս. Յովհաննէս եպիսկոպոս կապանեցի. Անապատ քերդը. Սաֆիանոս եպիսկոպոս Մելքեցի. Սարգիս եպիսկոպոս. Նախավկայի եկեղեցւոյ կառուցումը. Նորա հանդիսաւոր նաւակատիքը. Սաֆիանոս եպիսկոպոս. Սարգիս եպիսկոպոս. Նորոգ շինութիւնը. Նաւթաղբուրը. Նորավանդի կալուածոց ցուցակը. կալուածներն և քնավիլներն յարաբերութիւնը դնտապանի հետ:

Գարպ, վճիռ, սառը, խոհոջիւն աղբիւրի մօտ, տաղարիափա ընկուզենու թանձր տունկերի տակ նստած՝ ես ազատ շունչ եմ քաշում յոգնածութիւնից և հայեացքս պտտցնելով վանքի ձորի ամէն մի կէտի, ամէն մի ժայռի, ամէն մի ջրի ու տեղի վերայ՝ խորասուզվում եմ այդ ձորի հին պատմութեան մէջ: Մի հատարակ, վայրենի, ժայռապատ ձոր, որ այժմ վերը նկարագրած հնութիւններից աւելի ոչինչ չէ ներկայացնում մեզ, հասկանալի է թէ ինչ տմկալից անցեալ է ունեցել: Բաւական է յիշել որ այդ տեղ եղել է եպիսկոպոսարան, մետրոպոլիտների աթոռակալութիւն, հոգևորականաց և իշխանաւորաց երբեմնակի ժողովատեղի, ապաստանի տեղ և տուն Սիւնեաց իշխանութեան աւերման ժամանակ, նշանաւոր իշխանների և հոգևորականների դամբարան և վերջապէս անուանի, հռչակաւոր, հարուստ ուխտատեղի: Ի՞նչ կասկած որ յիշեալ պատմական իրողութիւնները իւր ժամանակի հայ ժողովրդի կեանքի մէջ մեծ նշանակութիւն կունենային և կկապէին հայերին այդ տեղի հետ:

Պատմութիւնը մեզ տանդում է, որ այժմեան աւերակ եկեղեցիների և շինութիւնների կառուցանելուց շատ ժամանակ և հնագոյն տարիներ առաջ՝ այդ նեղ և անձուկ ձորակի

մէջ՝ մի պատշաճաւոր տեղում շինուած էր կրաշաղախ քարերով սուրբ Կարապետի եկեղեցին, որ խիստ աքանչելագործ, ահարկու և անուանի էր մերձակայ սահմանակիցների համար։ Նորա մօտ էլ բլխում էր մի քաղցրահամ աղբիւր։

Այժմ սուրբ Կարապետի հետքն անգամ չկայ և նորա անհետանալու ժամանակը մեզ յայտնի չէ։ Հաւանական է որ նա Սահմանիոս եպիսկոպոս Օրբելեանի մահից շատ տարիներ յետոյ դեռ կար։ Իսկ յիշեալ քաղցրահամ աղբիւրը գոնէ այժմեան ընկուզենու տակի՝ հիւսիսակողմի ժայռից բղխող աղբիւրն է, որի ափի մօտ նստած գրում եմ այդ տողերը։

Այդ ձորի մէջ թանձրամած կաշկառուտում կայ մի այլ եկեղեցի՝ Փոկաս Հայրապետի անուանով, որից և այդ տեղը կոչւում էր Փոկաս։ Այդ երկու եկեղեցիները իւրեանց իւրայատուկ բժշկարար աղբիւրներով և իբրև ուխտատեղի՝ հռչակել էին ձորի նշանակութիւնը վայոց Ձորի հայ ժողովրդի մէջ։

Ձորի հռչակն աւելանալ ևս տպաւորուեց, երբ Բաղաց թագաւորութիւնը վերջանալուց և իշխանական տոհմի ու տիրապետելուց յետոյ, նոյն իշխանական տան վերջին տարաբաղդ անդամներից մինը՝ Յոհաննէս եպիսկոպոս՝ ատ. անգ. շրջելուց յետոյ, 554—1105 թուականին եկաւ վայոց ձոր գաւառը և կամեցաւ բնակել յիշեալ Սուրբ Կարապետի եկեղեցում։

Իւր բնակութեան համար նպատակայարմար գտնելով այդ ձորը՝ Յովհաննէս եպիսկոպոս՝ այդ տեղի վերայ աւանել հաստատուն պայմաններ ձեռք բերելու մտքով, գնաց ներկայացաւ պարսից Մահմետ սուլթանին, որից և առնուած բարձրագոյն հրովարտակ այդ տեղ համարձակ բնակելու համար։

Նա ժողովեց իւր շուրջը կրօնաւոր և ճգնազգեաց մարդիկ, իսկ աշխարհական մարդ կանչ հեռացրեց այդ վայրից։ Տէրունի նշաններ կանգնեցրեց վայրի շուրջը, որպէս զի չանցնեն կանայք և չկարմարդիկ։ Եկեղեցին աւաւելացնելու համար աւանահամանակից երկու գիւղերից—Գանձակ և Տխարբ—հող և անդաստան։

Սակայն եպիսկոպոսի խաղաղ և ճգնազգեաց կեանքը երկար չտևեց: Սահմանակից Հրաշեկայ պարսիկ բերդապահը, ինչպէս պատմեցի նախընթաց ԽԹ գլխում, չարամտութեամբ կամենում էր որսալ և սպանել Յովհաննէս եպիսկոպոսին և աւերել կրօնաւորների տունը: Նոյն գլխում մենք տեսանք որ հալածում եպիսկոպոսը, հմուտ լինելով պարսից լեզուին և փոխելով հագուստը պարսկական ձևի, գնաց Սպահան՝ Սուլթանի մօտ և նորա մահմեդական որդուն բժշկելով՝ ստացաւ Հրաշեկայ և Անապատ բերդերը ի ժառանգութիւն եկեղեցւոյն: Եկեղեցու վերայ բերդերի հաստատութեան արքունական հրովարտակը կարդացել և ճշգրտել է նոյն ինքն Սահակիանոս Օրբելեան:

Ի գէպ է այս տեղ յիշատակել, որ Անապատ անունով բերդ այժմ բոլորովին անյայտ է և ես իմ ճանապարհորդութեանս միջոցին, չեմ որոշել նորա տեղը և չեմ յիշել ոչ մի գիւղում: Այժմ աչքի առաջ ունենալով Ամաղուի Նորաւանից պատմութիւնը, որի վերջ շատ տեղ յիշուում է Անապատ բերդը, պէտք է եղրակացնել որ նա, այդ բերդը, նոյն Նորաւանքի շրջակայքումն էր և ունէր ազատականք:

Ամաղուի այժմեան շրջակայքի աշխարհագրական գիրքը ինձ համար առած, Անապատ բերդի տեղը որոշելու համար կարելի է կանգ առնել մի բերդի վերայ «Եչմալէ քաղէ քէբէր» անունով երեխէ գիւղի գլխին, որ նկարագրուած է իմ նախորդ գլխում և որը հեռու է Ամաղուի Նորաւանքից գէպի հիւսիս 6—7 վերստից ոչ աւելի, հին Գանձակ գիւղատեղի անմիջապէս:

Սակայն կարելի է անել և մի այլ ենթադրութիւն, այն է թէ Անապատ բերդը կանգնած էր այժմ Ագեար կամ Ա յար (գլ. ժթ) հայաբնակ գիւղումս, ներկայ աւերակ բերդատեղում: Այդ ենթադրութեան հիմունքն երևում են Օրբելեանի այն խօսքերից, որ Սիւնեաց եպիսկոպոս Սահակիանոս, փախչելով մահմետականներից, ելաւ սարերից իջնդրեց և ստացաւ յիշեալ եկեղեցու ժառանգութեան համար Ագարակի Ձոր (այժմ Ա յար) գիւղը, ապատանելով աշխարհական բոլոր հարկերից գիւղի այն ամէն մասերն,

որոնք վանքին կպատկանէին, այսինքն «զհող և զջուր, զայգի, զգիւղ և զագարակ և բերդն իսկ Անապատայ»*):

Սորանից երևում է, որ յիշեալ բերդը Ագարակի ձոր գիւղի սահմանումն էր և հաւանական է որ այդ գիւղը դրած էր այժմեան Ագեար կամ Այար գիւղի տեղ, որ հեռու է Ամալուի ձորից առ նուազն 10 կամ 12 վերստ:

Հրաշակաբերդը մինչեան անգամ խլուեց եկեղեցուց և նորից վերադարձաւ նորան, բայց Անապատ բերդը Յովհաննէս եպիսկոպոսի ժամանակից մինչև Օրբելեանի օրերը, երկու հարիւր տարուց առաւել մնաց անընդհատ՝ եկեղեցու ժառանգութիւն:

Յովհաննէս եպիսկոպոսը կառավարելով խորաձոր անապատի Սուրբ Կարապետի եկեղեցին՝ հրաշալի բաներ էր գործում այնքան որ հրամայեց գործերին լուել և նոքա լուեցին: Տիտրքայ գիւղից, որ այնժամանակ դրած էր այժմեան Նորավանքի դէմ, դէպի հարաւ, սոսկալի ժայռի գլխին, մի կին իւր ծծկեր մանուկով պատահմամբ ժայռից ընկնում է ձորը և եպիսկոպոսը խաչակնքելով ապրեցնում է նորանց: Այսպէս է ասում Օրբելեանի պատմութիւնը:

Յովհաննէս եպիսկոպոսը մեռաւ 663—1214 թուականին և երկու քարի մէջ թաղուեց իւր ապօթարանում: Այստեղ աւելորդ չէ յիշել որ եպիսկոպոսի մահուան տարին կամ պատմական և կամ տպագրական սխալ է, ըստ որում նա, Յովհաննէս եպիսկոպոս Կապանեցին, որդէն տարիքով էր՝ երբ եկաւ Վայոց ձոր սուրբ Կարապետի եկեղեցին և այնուհետև չէր կարող ապրել այնքան տարի, որքան յատկացնում է նորան նորա մահուան շրջանը:

Ըստ Օրբելեանի՝ իբր 617—1168 թուականին մեռաւ Սիւնեաց Գրիգոր եպիսկոպոս Մեղրեցին Վայոց ձորում, նորա մարմինը ամփոփեցին Նորավանքում «ընդ երանելի և սուրբ եպիսկոպոսի Տէր Յովհաննիսի Կապանեցւոյն»**): Մեղրեցու որդին

(*) Օրբել. պատմ. նահ. Սիս. գլ. ԿԳ.
(**) Օրբել. Պատմ. նահ. Սիս. գլ. ԿԳ.

Սահմանոս եպիսկոպոս (Փախրեվմեհ) որ յիշեալ Կոպանեցուց յետոյ Ժառանգեց Նորավանքը, քառասուն և վեց տարի եպիսկոպոսական պաշտօնեում մնալով մեռաւ և թաղուեց նոյն Նորավանքում 665—1216 թուականին, ըստ նոյն Օրբելեանի*): Պարզ է ուրեմն որ Կոպանեցու մահից յետոյ 46 տարի եպիսկոպոսութիւն վարող Սահմանոսը չէր կարող մեռնել առաջինից երկու տարի միայն յետոյ: Ուրեմն հնարաւոր պէտք է որ Յովհաննէս եպիսկոպոսն մեռաւ ոչ թէ 663, այլ 613 հայկական թուականին:

Յովհաննէս եպիսկոպոսից յետոյ՝ նորան յաջորդեց Մեղրեցի Գրիգոր եպիսկոպոսի որդի Սահմանոս եպիսկոպոսը, որին պարսից բարձրագոյն իշխանաւորները շատ սիրելով՝ գլուխական անունով կոչում էին Փախրեվմեհ, այն է Գրիստոսին սիրող: Իր դիրքից օգուտ քաղելով՝ Սահմանոս եպիսկոպոսը թէմական տեղեաց հաստատեց Նորավանքում՝ հրովարտակներով և ընծայաբերութիւններով առաւել ամրացրեց որբանոցի ներկան և ապագան և Հայոց Գրիգոր կաթուղիկոսից շրջաբերական ձեռք բերելով՝ շրջապատ գաւառները Նորավանքի սուրբ ուխտի վիճակ սահմանեցրեց:

Այսպիսով՝ խորաձոր անապատի սուրբ Կարապետի եկեղեցին հոգևոր և վարչական կեդրոն դառնալով՝ աստիճանաբար բարձրանում էր իբր նշանակութեամբ: Նորա զարգանալուն և առաւել նպաստում էր քրիստոնեայ պետութիւնը, որ քայլ առ քայլ յառաջ գնալով՝ դուրս էր մղում Սիւնեաց աշխարհից պարսկական իշխանութիւնը: Այդ շրջանում վրաց Թամար թագուհու քաջաբազուկ զօրապետները, հայազգի եղբարք Զաքարէ Սպասալարը և Իվանէ Ամբաքեգը, ուժգին կերպով տարածում էին դէպի արևելք յիշեալ թագուհու աշխարհակալութիւնը:

Յիշեալ Սահմանոս եպիսկոպոսին սիրում և պատւում էին

(*) Օրբել. Պատմ. նահ. Սիս. գլ. ԿԳ.

նաև այս զօրապետներն, որ տուին նորան իբրև հանգստեան տեղի Հայոց Ձին վանքն և Աբատաձոր գիւղը Կայենսում (այժմեան Ղազախի գաւառում)։ Բայց նորա բուն պաշտօնատեղին Սիւնեաց գաւառն էր, ուր 46 տարի եպիսկոպոսական պաշտօն վարելով, մեռաւ 665—1216 թուին Դարալագեազի Առիայ գիւղում և թաղուեցաւ Նորավանքում։

Սա դեռ իւր կենդանութեան ժամանակ իւր քրոջ որդուն— Սարգսին—եպիսկոպոս էր ձեռնադրել տուել Աղուանից կաթուղիկոսի ձեռքով և իւր մահից յետոյ այդ Սարգիս եպիսկոպոսն յաջորդեց իւր քեռոյն— Մաեփաննոսին —և բնակւում էր Նորավանքի մենաստանում —սուրբ Կարապետի եկեղեցում։

Նորավանքի տուրքը ուխտն առաւել հանդիսացնելու մտքով Սարգիս եպիսկոպոսը, Հիսարիա իշխանի խորհրդակցութեամբ, մտածեց եկեղեցի կառուցանել։ Որտանից գուցէ կարելի լինի եղրակացնել՝ որ այդ միջոցին տուրքը Կարապետի եկեղեցին հնացել էր և արդէն չէր համապատասխանում խորհրդոր անապատի՝ իբրև եպիսկոպոսարանի և մեծ ուխտի տեղի բարձր նշանակութեան։

Սակայն Սիւնեաց գաւառի այս նորաբոզբոյք ուխտը, որն Սարգիս եպիսկոպոսի օրով չկարողացաւ անվրդով յառաջ գնալ։ Նա հակառակութեան հանդիպեց Տաթևի վանքի կողմից, ուր այդ միջոցին իւրեան ուխտակալ էր յայտարարել ամն Յովհաննէս եպիսկոպոս, վերայիշեալ Մաեփաննոս եպիսկոպոսի հօրեղբօր որդին, ուրեմն Սարգիս եպիսկոպոսի հեռաւոր ազգականը։

Սիւնեաց երկիրը այդ միջոցին քաղաքականապէս դեռ ևս խարխուլ դրութեան մէջ, դեռ նոր էր անցել մի պետութիւնից միւս պետութեան ձեռքը, հին եպիսկոպոսական ուխտի ուերակների վերայ դեռ նոր էլ ծլում նոր ուխտը և ահա Տաթևը միւս կողմից բարձրացրեց իւր վազեմի, պատմական իրաւանց գրօշը։

Բայց խաղաղասէր Սարգիս եպիսկոպոսը չկամենալով հակառակութիւն և եկեղեցու օձառումն, համաձայնում է տալ Տաթևի Յովհաննէս եպիսկոպոսին բոլոր վիճակն, իսկ Նորա-

վանքի աթոռի համար առնում է միայն Վայոց ձոր գաւառը, ձահուկը (Ջահրի) և Նախիջևանը:

Այս անելով Սարգիս եպիսկոպոսը գնաց Հայոց Կաստանդին կաթուղիկոսի մօտ, առաջաւ նորանից շրջաբերական թուղթ, որպէս զի վերոյիշեալ երեք գաւառները հաստատուն վիճակ լինին Նորավանքի եկեղեցուն և որպէս զի այնուհետև ոչ ոք կաթուղիկոսներից, եպիսկոպոսներից և իշխաններից հակառակ չկանգնեն այս սահմանադրած վճռին: Երկու աթոռները միմեանցից անկախ յաւագ գնացին մինչև Սահմանաց եպիսկոպոս Օրբելեանի իշխանութեան ժամանակ, որ իւր ուժով զօրաբեամբ միացրեց նորանց:

Վերը յիշեցի, որ սուրբ Կարապետի եկեղեցին կարծես չէր գոհացնում այն ժամանակի Նորավանքի աթոռակալութեան բարձր նշանակութեանը: Վերջինս պահանջում էր մի վերանորոգութիւն, մի շքեղ տաճար. ուստի Վայոց ձորի այն ժամանակի կառավարիչ իշխանաց իշխան Լիպարիտ Օրբելեանի և Նորավանքի աթոռակալ Սարգիս եպիսկոպոսի փոխադարձ խորհրդով և նախաձեռնութեամբ, 665 Հայկական կամ 1216 փրկչական թուականին հիմնարկուեցաւ և ծոլը տարուց յետոյ աւարտուեց սուրբ Նախաւկայի անունով, ուր խորհրդաւոր խորաններով, այն գեղապաճոյճ եկեղեցին, որի այժմեան աւերակները նկարագրուեցան նախընթաց գլխում:

Երբ այս «մեծամեծաստակ աշխատանօք և անչափ ծախիւք շինեալ գեղեցկայարմար եկեղեցին ի Նորավանս» աւարտուեց 1223 թուականին, այդ ժամանակ սուրբ տաճարի նաւակատիքը կատարեցին շքեղապանծ հանդիսով, Սիւնեաց աթոռին վայել արժանաւորութեամբ, ուր ներկայ էին եպիսկոպոսներ, վարդապետներ, գահակալուխ իշխաններ, ազատներ, տանուտէրներ և երևելի բազմաթիւ և բազմահամար գիւղականներ, որոնց մասին պատմութիւնը աւելորդ է համարում յիշատակել: Հանդիսին ներկայ էր և Բուսպակ մեծ իշխանը—Սմբատէպ Իվանէի նշանաւոր գործակալը՝ լիպարիտ Օրբելեանի աները:

Երևակայեցէք դուք այժմ թէ այս ամայի, նեղ, ժայռոտ,

անուղղի, քալքարուտ, մեջտառախիտ, ճահճոտ ձորի մէջ, 1223 թուականին, մեղանից մօտ եօթ հարիւր տարի առաջ ինչ խռնուածն, ինչ իրարանցում, ինչ աղմուկ, ինչ շարժում, ինչ հետաքրքրութիւն, ինչ կեանք պէտք է տիրապետէր այդ ճոխ բազմութեան ժողովուելուց, սուրբ Նախավկայի եկեղեցու նաւակատեաց օրը:

Եթէ հանդիսակատարութեան համար վկաները մեզ համար՝ են լոկ այդ ձորի մերկ, սեպագոյն ժայռերը, նորանցից պոկուած գլորուած ահագին բեկորները, Նախավկայի ճաքճքած՝ մամուռածածկ պատերը, կանգուն և խոնարհուած խաչքարերը և այլն: Սոցանից պէտք է հարցնենք հանդիսակատարութեան մանրամասնութիւնները, հայ հանդիսականաց ջերմեռանդ ծունրադրութիւնը, ազօթարար բազմութեան արտաքուստ հայցուածքը, հոգևորականաց երգեցողութեան ելևէջները, շարականների քաղցրութիւնը, ոսկեզօծ խաչերի փայլը, բուրվառների քուրմն և այլն:

Չէ՞ որ սոքա այն ժայռերն են, որ 1223 թուականին, Նախավկայի Նաւակատեաց բազմութեան դէմ պոռթկացը իրարից խլում և անդրադարձնում էին: Չէ՞ որ այս ցանուցիր գլորուած սրբատաշ քարերը պոկուել են այն սուրբ տաճարի պատերից, որոնց վերայ, 667 տարի առաջ, հայ ժողովուրդը դրոշմում էր իւր հրաբորբոք շրթունքների համբոյրները:

Այո՛, նոքա են, բայց պատռտնձուել են. ի զուր եռ ապատում նոցանից հարցերիդ պատասխան: Քեզ պէս այցելուներ նոքա շատ են տեսել և այսուհետև էլ կտեսնեն, բայց լաւ կմնան յաւիտեան. դարձրու աչքերդ նոցանից, այդ ամբոխ քարերից և ինչ ունիս գտնելու՝ որոնիր գլուխդ պատմութեան մէջ: Սա է որ միտքդ ի շատե կպատճ է քեզ գոհացնել. . . . . :

(Եաթանաղեղ) ՔԱՋԲԵՐՈՒՆԻ.

ԱԶԳԱՅԻՆ

Վաղուց լուր էր տարածուած, որ Իտալիոյ գահակալ Իշխան Վիկտոր Էմմանուէլը մտադիր է այցելելու Սևանայ վանքն և Մայր Աթոռս Ս. Էջմիածնի: Անցեալ ապրիլի 21ին Նորին Բարձրութիւնը երեկոյեան ժամանեցաւ Ելենովկա գիւղն, Սևանայ ծովի ափին և այնտեղ գիշերելու էր: Նրանի թեմի փոխանորդ Գեր. Սուքիաս Եպիսկոպոսը, թարգման իրան ունենալով Մայր Աթոռոյս Հեմարանի նկարչութեան ուսուցիչ իտալահաս վեր. Պ. Վարդգես Սուրէնեանցին և ներկայանալով Նորին Բարձրութեան՝ լուր թեմի սահմանում նոյն երեկոյ, ողջունում է Նորա գալուստն Արարատեան աշխարհս ի դիմաց Նորին Օծութեան՝ Վեհափառ Հայրապետին ամենայն Հայոց հետևեալ խօսքերով.

«Ձերդ Արքայական Բարձրութիւն.»

«Բազդ ունենալով վայելելու Մեծին Իտալիոյ Գահաժառանգիդ ներկայութիւնն Հայաստան աշխարհում՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Գահանայապետի կողմանէ կշնորհաւորեմ Ձերդ Արքայական Բարձրութեան ողջամբ եկաւորութիւնը, և ամենայն յարգանօք կհայցեմ Ձերդ Բարձր բարեհաճութիւնը՝ շնորհաբեր այցելութեամբ պատուել Սևանայ հինաւուրց միայնաւորայն անապատը և Արարատեան Մայր Եկեղեցի Ս. Էջմիածին:»

Նորին Բարձրութիւնը շնորհակալութիւն է յայտնում և խոստանում անշուշտ այցելելու Ս. Էջմիածին և Նորին Օծութեան օրհնութիւնն առնելու, բայց Սևան երթալը կախուած կլինի եղանակից, որովհետև այդ երեկոյ եղանակը շատ անախորժ է լինում: Հողմն, ալեկոծուած լիճն և ձիհնախուռն անձրևը յայտնութիւն չեն խոստանում դիտաւորութեան յաջողութեան: Միւս առաւօտ պարզ երկինքն և խաղաղ օդն ամենքին ուրախութիւն են պատճառում: Վանքի մեծ հաւակը

գորգերով ու վայրի ծաղիկներով զարդարած՝ սպասելիս է եղել Ելենովկա գիւղի ծովեզրում։ Նորին Բարձրութիւնն իւր ուղեկիցներով առաւօտեան 9 ժամին մտնում է նաւակն, որ բաց առագաստով և թիավարութեամբ միաբանից՝ ճանապարհ է ընկնում դէպի վանքը։ Քանի չափ այլ փոքրիկ նաւակներ, լիքը հայ գիւղական ժողովրդոց բազմութեամբ, երգով և տեղական երաժշտութեամբ ուղեկցում են Նորին Բարձրութեան։

Երբ Նորին Բարձրութեան նաւակը մերձենում է Սևանայ կղզու ափին, շուրջառազգեստ միաբանութեան գլուխն անցած Սուքիաս Սրբազան եպիսկոպոսը դիմաւորում է Նորին Բարձրութեան հետևեալ խօսքերով.

«Ձերդ Ա.ըքայական Բարձրութիւն.»

«Սևանայ անապատիս աղօթաւոր միանձնուհք յայտնելով Ձերդ Ա.ըքայական Բարձրութեան ամենախորին շնորհակալիք՝ այս գեղազանց պատուոյ և շնորհաբեր այցելութեան համար սոյն խաղաղութեան և անդորրութեան սրբավայրը՝ քաղցր պարտականութիւն կհամարեն աղօթել առ Ամենաբարձրեալն Աստուած՝ պարգևել Ձեզ երկայն և բարերջանիկ կեանք՝ մեծին Իտալիոյ բազդաւորութեան և յառաջադիմութեան համար, որպէս ղի նա միշտ իւր ձեռքումն ունեցած լուսաւորութեան վերածնութեան և անվրդով զարգացման դրօշակին բարձր պահպանէ յօգուտ ընդհանուր մարդկութեան, և խաղաղութեան հրեշտակն ուղեկից առնէ մեծ Դահաժառանգիդ Ձեր ամենայն տարաշխարհիկ ուղևորութեանց ժամանակ՝ մինչև ոլջամբ հասանիլն ի Հայրենիս՝ յուրախութիւն սրտի նորա համօրէն որդւոց։ Ամէն։»

Պ. Թարգմանը թարգմանում է Իտալերէն և Նորին Բարձրութիւնը Սրբազան փոխանորդի ձեռք տեղվելով շնորհակալութիւն է անում։ Ապա միաբանութիւնը շարական երգելով առաջնորդում է Մեծ Հիւրին եկեղեցին, ուր յարմարաւոր աղօթքն ու քարոզները կարգալից յետ՝ Սրբազան Սուքիաս եպիսկոպոսը «պահպանիչ» ասելով օրհնում է Մեծ Հիւրին և ժա-

ղնվրգաց։ Սրանից յետ Թագաժառանգ Իշխանը վերնում է վանքի սրբութիւնքն ու հնութիւնքն, ապա բարձրանում է սարն, վերնում է Առաքելոց եկեղեցին իւր հնութիւններով, որոնցից առանձնապէս գրաւում է Նորին Բարձրութեան ուշքը աքանաս փայտից շինած դուռն իւր գեղեցիկ վորագրութեամբ, որ յիշատակ է Աշոտ Թագաւորի։ Իշխանը դուրս գալով եկեղեցուց՝ կանգնում և նայում է շրջակայքի վերայ և հիանում տեսարանի գեղեցկութեամբ։

Ապա իջնում են սարից և Իշխանն իւր ուղեկիցներով, տէրութեան կողմից նշանակած պաշտօնատարով ու Երևանի Պ. Նահանգապետի հետ հրաւիրուում են նախաճաշի։ Իշխանն ընդունում է հրաւէրը։ Մի սենեակում առանձին սեղան նստում են Մեծ Հիւրը, Սրբազան Փոխանորդն և թարգմանն. իսկ միւս սենեակում այլ հիւրերն և միաբանութիւնը։ Նախաճաշից յետ Նորին Բարձրութիւնը շնորհակալիք յայտնելով Նորին Սրբազնութեան և բոլոր միաբանութեան՝ մնում է նաւակն ելնելուվկա վերադառնալու։ Այստեղ էլ Արժ. վանահայր կարգադիր վարդապետը յայտնում է Նորին Բարձրութեան շնորհակալութիւն, որ գաղդաւորել էր իրանց վանքն իւր այցելութեամբ։ Նաւակը շարժուում է և ճանապարհորդները յաջողութեամբ դառնում են Ելենովկա։

Երեք շաբաթ շարունակ ամպամած երկինքն ապրիլի 23-ին պարզուեցաւ և երկու Մասիսներն իրանց ձիւնափայլ գագաթներից քօղը վերցրին և իրանց բոլոր փառահեղութեամբ ներկայանում էին այդ օրը հետաքրքիր նայողին։ Կարծես հէնց քնութիւնն ինքն հատկանում էր, որ օրը հանդիսաւոր է և Մայր Աթոռոյս և Արարատեան աշխարհին գալիս է այդ օրը մի Մեծ Հիւր։ Հիւրը Խոսրով Թագաժառանգ, Նէապօլսի Իշխան Վիկտոր Էմմանուէլեան էր։ Ժամը 11-ին եկեղեցու զանգակներն ձայնեցին աւետեցին Նորին Բարձրութեան գալուստը։ Ս. Աթոռոյս վանքի պարսպի մեծ դուռը զարդարած էր սուրհանդ Հիւ-

դերով, այսուհետեւ մինչեւ Տրդատայ դուռը վտանգ էր կանոչ և պատերը կանոչ ճիւղերով զարդարած։ Տրդատայ դռնից մինչեւ եկեղեցու մէջ իջնան տեղը՝ ճանապարհը ծածկած էր կարմիր մահուդով և զառ դիբայով։ Ժամը 11ին Մեծ Հիւրի կառքը կանգնեցաւ վանքի հրապարակում, ուր Լուսաւորչական Երեւելի Եպիսկոպոսը զգեստաւորուած Ս. Աւետարանն և Առաւօտածածնայ պատկերն ի գլուխ և բոլոր միաբանք շուրջանաւագնաց խաչ ու խաչանաւներով, երկու սարկաւագունք բուրվառներով և երգեցիկ խումբը դիմաւորեցին Նորին Բարձրութեան։ Լուսարարապետ եպիսկոպոսն ողջունեց գալստեան։ Նորին Բարձրութիւնը երեսը խաչակնքելով համարհեց Ս. Աւետարանի և Առաւօտածածնայ պատկերի առաջ։

Անդ ձեմարանի աշակերտք ճանապարհի երկու կողմը շարեշար սկսան շարժել, նոյնպէս հետեւում էին երգեցիկ խումբը և միաբանք երկշարք և Նորին Բարձրութիւնը Արքունի լուսարարապետի կողքով։ Հանդիսականք Մեծ Հիւրի հետ մտան եկեղեցին։ Նորին Ծաղութիւն վեհափառ Հայրապետն աղօթս զգեստաւորած, մի ձեռին խաչ կենաց փայտով և միւս ձեռին հովուական գաւազանը, դիմաւորեց Նորին Բարձրութեան իջմանն տեղւոյն առաջ և խաչակնքելով չնորհաւորեց և օրհնեց Նորա գալուստն հետեւեալ խօսքերով.

«Ձերդ Արքայական Բարձրութիւն»

«Մայր եկեղեցիս Հայաստանեայց կաթուղիկէ Ս. Էջմիածին սրբագրամար դասուք հոգեւորականաց իւրոց՝ հոգեզուարճ ուրախութեամբ ընդ յառաջ ելանէ Ձերում Արքայական Բարձրութեան։ Իսկ մեք խորին յարգանօք ողջունեմք զփառաւոր գալուստ Գահաժառանգ Իշխանիդ Մեծին Իտալիոյ՝ յայս յարկ Սրբութեան։

Օրհնեալ է Առաւուտ, որ ի ձեռն հրեշտակին խաղաղութեան ամփոփ և անվնաս առաջնորդեաց Ձերում Բարձրութեան յայցելութիւն հնադարեան Տաճարիս։

Երանելի՛ յաղողէր մեզ դոյզն ինչ լցուցանել զփափագ ցան-

կութեան սրտի Ձերոյ՝ վերսալք նուիրական հնազանդեամբք, որք գանձին ի Մայր Աթոռոջս։

Օրհնեսցե՛ Տէր Աստուած զմեզ ի Ձեր յայս աշխահ Աբրահամեան, որ երկիցս հանդիսացեալ է խանձարուր մարդկութեան։

Օրհնեսցե՛ Տէր Աստուած զառաքինի դիւանս Ձեր և զԹագաւորութիւն Մեծին Խալիֆ և բարեյաջող վերադարձ տացէ Ձերում Բարձրութեան ի հայրենի ժառանգս թիւն Ձեր, ամէն։»

Մեծ. Պ. Վարդգէս Սուրէնեանցը թարգմանեց Խալէթլէն լեզուով և Նորին Բարձրութիւնը պատասխանեց, յայտնելով իւր շնորհակալութիւն օրհնութեան և բարեմասնութեան համար։ Յետոյ Նախագահը առաց «Սուրբ Եկեղեցեաց» քարոզը, Նորին Ծնունդ Թիւնը «ի վեր ացաբրիս» ալօթքը, ապա Սրբազան Լուսարարապետը «Սուրբ Խաչիս» քարոզն, որից յետ Հայրապետը «Պահպանիչ» ասելով՝ օրհնեց Թագաժառանգին Մեծին Խալիֆ՝ Իշխան Վիկտոր Էմմանուէլին և ներկայ ժողովրդոց։ Ապա երկար եպիսկոպոսաւնք ազաչնորդեցին Նորին Բարձրութեան Մասանց խորանը, սուրբ սեղանի վերայ դնրսած էին Աթոռոյս նշանաւոր Սրբութիւնքն, որոնց խոնարհութիւնը յարգանօք մերձեցաւ Մեծ Հիւրն և իւր յիշատակարանում նշանակեց խոնարհութիւնն։ Տնտեսք և նշանաւոր զգեստներն, ապա մատուռ գաւազանաց սենեակին, ասաի Թանգարանն, ուր Նորին Ծնունդ Թիւնը, զգեստս հանած, առաջ եկաւ Թագաժառանգ Իշխանին, որ շնորհակալութիւն յայտնելով՝ խնդրեց Նորին Ծնունդ Թեան դառնալ վեհարան և հանգստանալ։ Իսկ ինքը եկեղեցու ամեն մասերը զննելից և նշանակելից ու կարևոր տեղեկութիւններ ստանալից յետ՝ գնաց եկաւ եկեղեցու, և շրջելով եկեղեցու շուրջը՝ նկատեց ամեն գերեզմաններն, եկեղեցու և զանգակատան փորագրութիւնք ու արձանագրութիւնքն և նշանակելով յիշատակարանում՝ գնաց վեհարան։ Նորին Ծնունդ Թիւնը դիմաւորելով Իշխանին՝ առաջնորդեց Ծալկեայ դահլիճն, ուր կարճ միջոց խօսելից յետ, Նորին Բարձրութիւնը յայտնեց ցանկութիւն գրադարանը տեսնելու։ Այստեղ էլ Նորին Բարձրութիւնը կէս ժամից աւելի մնալով՝ մանրամասնաբար զննեց նշանաւոր

ձեռագիրներն ու նոցա նկարներն ու կարևոր տեղեկութիւնքը գրելով յիշատակարանի մէջ, շնորհակալութիւն յայտնեց և վերադարձաւ Վեհարան, ուր ճոխ սեղան էր պատրաստած Մեծ Հիւրի համար: Վեհարանի դահլիճում առանձին սեղան էր գցած Նորին Բարձրութեան և նորա աջակիցների, Տէրութեան կողմից նշանակած պաշտօնական գաղտնի ներգործական խորհրդական Պ. Հաքքելի և Երևանի Պ. Նահանգապետի համար: Ճաշկերոյթի վերջին Նորին Օծութիւնն առաջարկեց Թագաժառանգ Իշխանի և սա փոխադարձաբար Նորին Վեհափառութեան կենաց բաժակներ, որոնք յատնկայա գատարկուեցան: Ճաշից յետ Նորին Օծութիւնը առաջնորդելով Իշխանին և նորա ուղեկիցներին ճաղկեայ դահլիճն, օրհնեց և անձամբ կախեց Նորին Բարձրութեան պարանոցը ոսկեայ խաչ զմրուխտներով ընդելուզած և մէջ տեղում խոշոր ագամանդով, որոյ տակը շինած էր փոքրիկ պահարան կենաց փայտի մասունքի համար, յանձնեց նոյնպէս Իտալիոյ բոլոր արքայական գերդաստանի օրհնութեան կոնդակը: Իշխանը յայտնելով իւր շնորհակալութիւնն Նորին Օծութեան օրհնութեան և սիրալիր ընդունելութեան համար, քանիցս կրկնեց, որ երբէք չի մոռանալ Նորին Օծութեան և Ս. Էջմիածինը: Ապա իւր հրաժարականը տալով Նորին Օծութեան, Թագաժառանգ Իշխանը բուլմարով հեծաւոտ գնաց Ձեմարան, ուր տեսուչ Արժ. Նահապետ աբեղայն դիմաւորեց Նրան և աշակերտք, որոնք դուրսը շարուած էին, ակոան երգել ազգային երգեր: Իշխանը գլխարկը հանելով ամենքին ողջունեց և մտաւ Ձեմարան, ուր տնտղեց գրադարանն ու հանդիսարանն: Ապա մի քանի կարևոր տեղեկութիւնք հարցնելով, իւր անունը ստորագրեց այցելուաց մատեանում, և շնորհակալութիւն անելով Ձեմարանի վարչութեան հրաժարեցաւ: Աշակերտաց երգեցիկ խումբը մինչև կառքը երգելով ճանապարհ գցեց Մեծ Հիւրին: Ժամը 3½ին գնացքն ուղղեցաւ դէպի Երևան:

Նուիրեայ Նորաշէն Սբ. Աստուածածնին եկեղեցւոյ տղայոց միաբանեան ուսումնարանի եռամեայ հաշիւը 1886 ամի 1 Սեպտ.։

Ուսումնարանը բացուեցաւ 1886 Թուի Սեպտեմբերի 15, ից։ Թողուվըրդական ընտրութեամբ և Վեհափառ Հայրապետի Հոկտ. 23, 1886 ամի № 630 կոնդակով հաստատութեամբ Հոգաբարձութիւնս սկսեց կառավարել ուսումնարանը։ բացուեցաւ երեք պատրաստական դասատուն. հրաւիրուեցան ուսուցիչներ, որոնց առաջին տարին ուսումնարանը վճարում էր դասին 17 րուբլի, իսկ հետեւեալ տարիները խնայողութեամբ կարելի եղաւ այդ վարձատրութիւնը 20 րուբլու հասցնել։

Առաջին տարին բոլոր ուսուցիչները վարձով էին. իսկ երկրորդ տարուայ սկզբին առաջարկեց իւր ձրի ծառայութիւնը պ. Կոստանդին Ճարբարոնեանցը, որ երկու տարի շաբաթական 6—7 դաս տալով ամենայն անձնուիրութեամբ ծառայեց դպրոցին, որի համար Հոգաբարձութիւնս բարւոք համարեց իբրև խրախոյս, մեր եռամեայ գործունէութեան վերջը, մի համեստ ընծայ տալ Նորան։

Առաջին տարին դպրոցիս աշակերտների թիւն էր 76, որոնցից 38 Թոշակով (տարին 1 ից մինչև 3 րուբլի), իսկ 38 ձրի. երկրորդ տարին 87, որոնցից 69 Թոշակով (1 - 5 րուբլի) իսկ 18 ձրի. իսկ երրորդ տարին 100, որոնցից 77 Թոշակով (1 - 6) րուբլի) իսկ 23 ձրի։

Թոշակ ստացւում էր միմիայն դասագրքերի և դասական պիտոյքների համար, որ ուսումնարանը ձրի էր մատակարարում ամենքին։

Առաջին տարին ուսումնարանից աւարտեցին 6 հոգի, երկրորդ տարին՝ 6, և երրորդ տարին 12, որոնցից մեծ մասը մտան Ներսիսեան դպրոցի առաջին դասարանը։

Երեք տարուայ ընթացքում Հոգաբարձական ժողովները եղան 15 անգամ, իսկ Հոգաբարձական և ուսուցչական խառն ժողովները 32 անգամ, ընդամենն 47 ժողով։

Համառօտ պատմութիւն եռամեայ շրջանի.

Ուսումնարանը բացուելիս չունէր և ոչ մի կոպեկ։

1886—7

Մ—տ.

	Ր.	կ
Եկեղեցւոց ստացուած է ուճիկների համար	1115	47
Ներսիսեան դպրոցից Էֆէնդեանցի կտակած գումարից	52	66
Աշակերտներից դասական պիտոյքների համար	189	

Եկեղեցւոց սեղան և աթոռներ գնելու ուսուց. սենեակի համար	7	
Հին տեարերի վաճառումից	1	55
	1365	68

Ծախք.

Ռոճիկ ուսուցչաց և ծառայի	1178	
Դասագրքերին և դաս. պիտոյքներին վճարած է	105	42
Կարասիք է գնուած	13	50
	1296	92

1887—8

Մուտք.

Մնացորդ անցեալ տարուանից	68	76
Եկեղեցուց	1266	66
Ներսիսեան դպրոցից	48	23
Աշակերտներից	267	
	1650	65

Ծախք.

Ռոճիկ ուսուցչաց	1319	89
Դասագրքերի և դասական պիտոյից	115	42
Բլանկների տպագրութեան	10	60
Մատենից գին և այլ մանր ծախքեր	7	50
	1453	41

1888—9 Մուտք.

Մնացորդ անցեալ տարուանից	197	24
Եկեղեցուց	1320	
Ներսիսեան դպրոցից	35	48
Աշակերտներից	239	50
Վաճառեալ տետրերից	2	75
	1795	97

Ծախք.

Ռոճիկ ուսուցչաց	1390	93
Դասական պիտոյքներին և գրքերին	134	94
Կարասիք	25	70
Փայտ և ջուր *)	22	10

(*) Ա. աշակին տարին գործ են դրուած եկեղեցու շինուածքից մնացած անպէտք փայտերը։

Բլանկներ և յայտարարութիւն լրագիրներում	6	50
Մատենից գին	2	
Նորոգութիւն ուսումնարանի տան	11	79
	1593	96

Ծախքը մնացից հանելով առ 1 սեպտեմբերի 1889 թուի մնում էր ուսումնարանի դրամարկղում 202 ռուբլի 1 կոպէկ։

Բացի դորանից սոյն երեք տարուայ ընթացքում եղան հետևեալ կատկանգութիւնները յօգուտ դպրոցիս։

1. Առաջին տարին վախճանուելով դպրոցիս հոգաբարձու Մովսէս Դանդարեանցը կտակեց ուսումնարանին 1000 ռուբլի, որ դեռ ստացուած չէ ժառանգներից *)։

2. Հանգուցեալ Զաքարիա Ղարղաճեանցի կտակած 500 ռուբլուց հոգաբարձութիւնս ստացաւ արդէն 300 ռուբլի. մնում է ստանալի 200 ռուբլի։

Ուրեմն ուսումնարանը 1889 թուի սեպտ. 1ին ունէր առ ձեռն դրամ 500 ռուբլի 1 կոպէկ և 1200 ռուբլի ստանալիք։

Հոգաբարձուք՝ Գէորգ Տէր-Աստուածատրեանց, Յարութիւն Ն. Գրիգորեանց, Եղիայ Աբրահամեանց։

ՀԱՇԻՒ

ելից և մուտից դրամոյ եկեղեցական — ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Նոր-Բայազիտ քաղաքի վասն $188^{7}/_{8}$ *ուսումնական տարւոյ։*

ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱԳԼԽԻ

1. Ուսումնարանապատկան դրամագլխի գումարն է երկու հազար ինն հարիւր քառասուն րուբլի—(2940 ր.)

2. Սրանից առած է տղայոց Մ. Մեսրովբեան ուսումնարանի շինութեան վրայ ծախսելու երեք հարիւր եօթանասուն և եօթ րուբլի—(377 ր.)

3. Մնում է դրամագլխից զանազան անձանց վրայ շահեցնելու համար մուրհակագրերով երկու հազար հինգ հարիւր վաթսուն և երեք րուբլի—(2563 ր.)

(*) Կտակակատարների մէջ եղած տարաձայնութեան պատճառով հոգաբարձութիւնս չկարողացաւ մի որ եւ է կերպով համաձայնութիւն կայացնել նոցա հետ, ուստի դիմեցինք կոնսիստորիայի օգնութեան, որով համաքեա թէ գործը վերջանալու վրայ է։

4. Վերոգրեալ 2 յօդուածոյմ յիշուած 377 ր. որը ծախսուած է տղայոց ուսումնարանի շինուելեան վրայ, Հոգաբարձուելիւնը պարտաւոր է ուսումնարանի մուտքը աւելացած ժամանակին դարձեալ նոյնքան գումար յատկացնել դրամագլխի հաշուին։ Ա՛յս գումարը 377 ր. գրուած է մուտք № 78։

ՄՈՒՏՔ

Սկսեալ ի 14 Յունուարէ 1887 թուէ մինչ 30-ն Օգոստոսի 1888 թուէ։

		Ր.	Կ.
1.	Անցեալ 1886 ուսում. տարւոյ աւելացած գումարը	138	74
2.	Ուսումնարանապատկան դրամագլխի տոկոսը . .	453	31
3.	Երեսփոխանից մոմի արդիւնք	60	
4.	Ս. Աստուածածին եկեղեցուց՝ արդիւնք . .	46	
5.	Նոյն եկեղեցու մասանց արդիւնքը . . .	80	71
6.	Վաճառուած է հին փայտեր, գերանի կտորներ և աղիւս	73	4
7.	Ուսումնարանապատկան 11 կրպակի վարձը . .	338	68
8.	211 պսակատէրերից նուիրուած է	172	9
9.	Նուէր զանազան անձինքներից	24	
10.	198 աշակերտի և աշակերտուհու թոշակ . .	662	
11.	Մոմավաճառութեան կապալագրամը . . .	837	83
12.	Թատրոնական ներկայացումներից զուտ արդիւնք .	121	23
13.	Օրիորդաց ձեռագործների վիճակախաղից և ծախածից	79	10
14.	Դրամագլխից վեր առած է	377	
	Գումար է	3463	73

ԵԼՔ

Սկսեալ ի 14 Յունուարէ 1887 թուէ մինչ 30 Օգոստոսի 1888 թուէ։

		Ր.	Կ.
1.	Տղայոց ուսումնարանի շինուելեան վրայ ծախսած է .	1195	50
2.	4 ուսուցչի և 2 վարժուհու ռոճիկ . . .	1650	
3.	Ուսումնարանապատկան կրպակների վրայ ծախսած է .	51	35
4.	Ուսումնարանի ծառաներին	111	
5.	Օրիորդաց ձեռագործի նիւթեղէնք . . .	63	54
6.	Մանրածախք և վառելիք	92	21
7.	Հարկաւոր բլանկների տպագրութեանը . .	28	45
8.	Երևանի Հայոց կոնսիստորիային . . .	28	
9.	Ուսումնարանի մէկ սեղան և մէկ գպրոց . .	19	
10.	Վարժուհու տների վարձը	40	
	Գումարն է	3279	5

ԱՊԱՌԻԿ

1. Որը գրած է մուտք, բայց դեռ չէ ստացուած	62	25
2. 84 հատ վաճառելի գրքեր	63	30

Ապառիկ, որը պէտք է ստացուի և մուտք չէ

1. Պատրաստի ձեռագործ	100	
2. Մեսրովբ Տէր Յովհաննէսեանի մուրհակը	60	

ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱԳԼԽԻ

Եկեղեցական—ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Նոր-Բայազիտ քաղաքի վասն 188³/₉ ուսումն. տարւոյ.

1. Ուսումնարանապատկան դրամագլխի գումարն է երկու հազար իննհարիւր քառասուն րուբլի (2940) ր.)

2. Սրանից առած է տղայոց Ս. Մեսրովբեան ուսումնարանի շինութեան վրայ ծախսելու երեք հարիւր եօթանասուն եօթն րուբ. (377).

Այս գումարը գրուած է մուտք յ30 օգոստոսի 1888 թ. համ. 78.

3. Ներկայ 188³/₉ ուսում. տար. ընթացքում դարձեալ առած է և ծախսած ուսումնարանի վրայ երեք հարիւր ութսուն ութ րուբ. (388 ր.)

Այս գումարը գրուած է մուտք ի 20 յուլիսի 1889 թ. համ. 54.

4. Դրամագլխի մնացած գումարը երկու հազար մէկ հարիւր եօթանասուն և հինգ րուբլի (2175 ր.) տրուած է տոկոսով մուրհակագրերով.

ՄՈՒՏՔ

Սկսեալ յ30 օգոստոսի 1888 թուի ց22 յուլիսի 1889 թ.

1. Անցեալ 188/₉ ուս. տար. աւելցած գումարը	184	68
2. Նուէր զանազան անձինքներից	69	60
3. Ուսումնարանապատկան դրամագլխի տոկոսը	262	20
4. Ուսումնարանապատկան կրպակների վարձը	260	
5. Պահատէրերից նուէրներ	176	50
6. Աշակերտների և աշակերտուհիների թոշակը	747	
7. Օրիորդաց ձեռագործի վաճառելուց	29	50
8. Թատրոնական ներկայացումներից	111	75
9. Ս. Աստուածածին եկեղեցւոյ արդիւնքը վասն 1888 և 1889 թ.	200	
10. Նոյն և Ս. Կարապետ եկեղեցեաց մասանց տանից	45	90
11. «Յիշատակարանի» վաճառելուց և մնար մուտք	23	
12. Մոմավաճառութեան կապալագրամը	420	29
13. Դրամագլխից առած է	388	

ԵԼՔ

1·	6 Ուսուցչի և 2 վարժուհու ռոճիկը . . .	2300	
2·	Ծառաներին վարձ	107	
3·	Հինութեան վրայ և ձեռագործի	112	74
4·	Մանրածախք և հին գրքերի վնասը . .	139	29
5·	Թղանթներ, գզրոց և նստարաններ. . .	39	
6·	Վառելիքի	43	50
7·	«Ցիշատակարանի», ուսումնարանի գրադարանի ու աղքատ աշակերտների համար գրքերի . . .	90	91
	Գումարն ֏	2832	44

Պատասխ. Հոգաբարձու Մատթէոս Ա. Փրիկեանց.
Անդամք հոգաբարձութեան՝ Գրիգոր Քահանայ Բալագեօզեանց
Ստեփան Խատիկեանց
Զոհրապ Ատամեանց:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԲԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՋԳԻՍ.

Կանգակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս ի 6 Մարտի թ. 97, յանուն Յարգելի Սարգսի Թևանեան Հախնազարեանց, որոյ՝ ի յարգանս երկոտասանամեայ անբնդհատ և հաւատարիմ հոգաբարձութեան նորա և գանձապահութեան ի պարոցս Հայոց Վերին—Ագուլեաց՝ շնորհեցաւ նորին յարգութեան կոչումն մշտնջենաւոր պատուաւոր հոգաբարձուի յիշեալ ուսումնարանաց:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս, ի 13 Մարտի թ. 101, որով հաստատեցաւ ի պաշտօն նախագահի հոգաբարձութեան վանն եկեղեցական — ծխական միգամտեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Սուրբմի քարեկ. Ներսէս քահ. Տէր Պետրոսեանց՝ ի տեղի Յովսէփ ուրաց քահանայի Աւետեանց:

—

Կանգակ Վեհափառ Հայրապետի Ազգիս ի 13 Մարտի թ. 105, որով ընդարձակեցան իրաւունք փոխանորդի Թեմակալին Հայոց Երեւանայ՝ բանալ ի Տաշքուրգան գեղջ եկեղեցական—ծխական միգամտեան տղայոց ուսումնարան:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Սղգիս ի 13 Մարտի թ. 106, որով հաստատեցաւ ի պաշտօն նախագահի հոգաբարձութեան եկեղեցական—ծխական միջատեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Եկատերինոգար քաղաքի բարեկ. Գէորգ քահ. Զաքարեանց ի տեղի Մինաս ուշագ քահանայի Բաբեանց:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Սղգիս ի 17 Մարտի թ. 115, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան վանն եկեղեցական—ծխական միջատեան տղայոց ուսումնարանին Հայոց Թեմիր—խան—Շուրայու՝ Յարգելիք՝ Պետրոս Բախիշեան Սարգսեանց և ի պաշտօն անձնախնամարդի նորին պատուելի Ինժիներ պօդպրապօրշչիկ Եվրեմն Աւետարեանց:

Կոնդակ Վ. Հ. Հայրապետի Սղգիս ի 17 Մարտի թ. 116 որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան վանն եկեղեցական—ծխական միջատեան տղայոց ուսումնարանին Հայոց Ամուսան գեղջ Նուխայ գաւառի բարեկրօն Յարութիւն քահանայն Յարութիւնեանց, երեցփոխանն եկեղեցւոյ տեղւոյն և Յարգելի Յարութիւնն Եղիազարեանց, իսկ ի պաշտօն անձնախնամարդի պատուելի Բախիշն Մարգարեանց:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Վեհափառ Հայրապետի Սղգիս ի 25 Մարտի թ. 138, յանուն բազմաշխատ պաշտօնէի եկեղեցւոյն Հայոց Ախալքալաքի գեղջ Գօրտոյ գաւառի ծերունազարդ Յովհաննէս ուշագ քահանայի Տէր Աստուածատրեան Տէր Գալստեանց,—որով թոյլատրեցաւ նմա, եղբօր նորին և ամուսնոյ վերջնոյս, զի յետ մահուան նորին թափիցին ի գաւթի իւրակերտ հոյակապ քարաշէն եկեղեցւոյ տեղւոյն, որ վանն ծախեալ են նոքա ի սեպհականութեանց իւրեանց ց30,000 հազար րուբլիս և խոստացեալ են կառուցանել նա և երկսեռ ուսումնարան:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Սղգիս ի 6 Ապրիլի թ. 154, որով ընդարձակեցան իրաւունք Փոխ-Թեմակալին Հայոց Երե-

*Ա*նանայ քանալ ի Գօրիս ուսանի եկեղեցական ճեմական երկդասեան տալոյց ուսումնարան և հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան վասն այնորիկ ուսումնարանին՝ Բարեկրօն Խորէն քահանայն Մելիք-Դադայեանց, երեցփոխանն եկեղեցւոյ տեղւոյն և յարգելիք՝ Հայրապետեան Բաղրեան և Յովհաննէսի Յարութիւնեան Մկրտչեանց. իսկ ի պաշտօն անձնափոխանորդաց՝ պատուելիք՝ Խաչատուր Շահխաղաթեանց և Մանուչարն Սահակեան։

—

Կանդակ օրհնութեան վեհափառ Հայրապետեաւ Ադգիս ի 11 Ապրիլի թ. 160, յանուն Մեծապատիւ Յովսէփ—աղայի Պետրոսեան Ալթունեանց, վասն նուիրելոյ նորա զհինգ հարիւր րուբլի. ի նպաստ ծախուց վերանորոգութեան Տաճարին Ս. Էջմիածնի։

—

Կանդակ վեհափառ Հայրապետի Ադգիս ի 18 Ապրիլի թ. 164, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան վասն եկեղեցական—ճեմական երկդասեան օրիորդական ուսումնարանին Հայոց Ս. Աստուածածնին Թանդոյեան եկեղեցւոյ Կաւիճոյ Տըփխիս քաղաքի՝ բարեկ. Ներսէս քահ. Ղամազեանց, երեցփոխանն այնր եկեղեցւոյ և պատուելիք՝ Զաքարիայն Գրիգորեան Զալինեանց և Շահարն Գուրգէնեան Նուրալեանց. իսկ ի պաշտօն անձնափոխանորդաց՝ յարգելիք՝ Դարչոն Եսայեան Առաքելեանց և Ներսէսն Սարգսեան Յովհաննիսեանց։

ԲԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

19 Մարտի. Երևանի թեմի Փաշալու գիւղի Սահականնոս քահանայ Տէր Սահականնոսեանը ենթարկուած է երկամեայ տալաշխարութեան եկեղեցու դրանը, 15 րուբլի տուգանքի յօգուտ Էջմիածնի և 5 րուբլի տուգանքի յօգուտ Երևանի թեմի քահանայից որդոց և այրեաց գանձանակի։ Այս քահանան

ինքնակամ և առանց թոյլատուության մերձաւոր Հոգևոր իշխանութեան պահակել է իւր ծխական Կարապետ Մարտիրոսեանին օրհնդր Նազլու վարդանեանի հետ, խնամութեան հինգերորդ աստիճանում: Ս. Սինոդը հրամանագրեց այդ պահակն համարել վաւերական, սակայն ենթարկելով ամուսնացեալներին վերամատոյց եկեղեցական տուգանութեան:

—

19 Մարտի. Ս. Սինոդը հրամայեց լուծուած համարարել Ելևանի թեմի Մատաղիս գիւղի բնակիչ Յովհաննէս Թունիկեանի և նորա կնոջ Վարթերի Յարութիւնեանց Թունիկեանի պսակը: Յովհաննէս Թունիկեանը՝ քահանայի ներկայութեամբ պաշտօնական բժիշկների քննութեամբ համարուել է բոլորովին անընդունակ ամուսնական կենաց, մինչդեռ կինը — առանց սեռական պակասութեան, ամուսնական պարտաւորութեանց կատարման ընդունակ և տակաւին ի կուսութեան: Ս. Սինոդը այս պսակը լուծուած է համարում ըստ Տէրութեան օրինաց յօդ. 45, հատ. ժ. մասն ա. և ըստ եկեղեցական կանոնաց Մխիթար Գոշի գլ. ե. «եթէ պատահի ամուսնութեամբ ոչ տիրել կնոջ առն՝ դատաստան լիցի բաժանման, լինելն առն այլում»: Թոյլատրուում է արձակուած կնոջը ամուսնանալ ուրիշի հետ:

—

19 Մարտի. Երնջակի Ս. Կարապետ վանքի վանահայր կարգուեց, ըստ հրամանի Ս. Սինոդի, նոյն վանքի միաբան բարեշնորհ Մխիթար աբեղայ Տէր Մինասեանցը, պարտաւորուելով տարեկան 500 րուբլի ներկայացնել յօգուտ Հոգևոր Ձեմարանի, վանական արդիւնքներից:

—

24 Մարտի. Թիֆլիզի բնակիչ Մխիթար Յովհաննիսեան Պօղոսեան Աւագեանց թողնելով իւր կին Մարիամ Աւագեանին թշուառ վիճակում՝ անյայտացել է 1882 ամի, մայիսամսից մինչև ցայսօր: Որովհետև Ռուսաստանի և Տաճկաստանի բոլոր Հայոց վիճակներում եղած խուզարկութիւնները և Սենատական

լուծգրուամ, 1885 ամի յօգ. 761, յայտարարութիւնը ոչ մի հետևանք չեն ունեցել, և որովհետև արդէն մէկ տարի անցել է այդ մարդուս անյայտանալուց, ուստի Ս. Սիմեօդը վճռեց լուծուած համարել այդ ամուսինների պսակը և թոյլատրել կնոջը նորից ամուսնանալու։

16 Ապրիլի. Երևանի թեմի Բաշքեանդ գիւղի Ծերուհի և կոյր Աւետիս քահանայ Տէր Յովհաննեանը, իբր գայթակղեցուցիչ վարուց համար, որոշմամբ Ս. Սիմեօդի, ուղարկուեց յապաշխարութիւն Սևանի վանքը, անորոշ ժամանակով։

16 Ապրիլի. Երևանի թեմի Նարաշէն գիւղի Աւետիս քահանան և նոյն մասի գործակալ քահանան ենթարկուում են 25 ական րուբլի տուգանքի և եռամսեայ ապաշխարութեան եկեղեցու դրանը, կատարած լինելով առանց Ծայրագոյն Հոգևոր իշխանութեան թոյլատուութեան աղգակցութեան օրհնութեան առիթ ճանի պսակ։

20 Ապրիլի. 1880 թուի 30 յունիսի, Թիֆլիզի բնակիչ Նիկողայոս Գարագեանցի պսակը վարվառէ Եպատրեանցի հետ, աղգականութեան 6-րդ աստիճանում, անվաւեր էր համարուած մինչև գայսօր և այդ ամուսինների զաւակները ապօրինի։ Տեղական վիճակաւոր Առաջնորդի միջնորդութեամբ և Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ, Ս. Սիմեօդը զիջանելով Նիկողայոս Գարագեանցի աղերսանքին, բաւ համարելով նորա տասնամեայ տառապանքը ի խրատ և ի գգուշութիւն այլոց, վճռեց՝ վաւերական ճանաչել յիշեալ ամուսինների պսակը և այդ ամուսնութիւնից ծնուածներին օրինաւոր զաւակ։

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։

Հնութիւնք Հայրենեաց	—	20
Հռովմէական եկեղեցի	—	80
Հանդէս բացման Ճեմարանի	—	10
Հրահանգ քերականութեան	—	25
Հրահանգ աւագ քահանայից	—	10
Հրահանգ վասն թեմական տեսչաց	—	10
Հայն բազմաց	—	50
Հայնագրեալ երգեցողութիւնք Թամազրոց	4	—
Հայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	2	—
Հայնագրեալ շարական	60	
Հանապարհորդութիւն Հակստհաուզէնի	—	80
Ճաշոց	60	—
Մաղմանք վասն Հայրապետի աղջիս	—	20
Մաշտոց Ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Ցաւելուած Թամազրոց Հայնագրեալ	—	20
Նախակրթանք. Բ. մասն	—	20
Նոյն Գ. մասն	—	20
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	
Պատմութիւն Ժողովոց Հայաստանեաց եկեղեցւոյ	—	20
Պատմութիւն Խաչակրաց	—	20
Պատմութիւն Հայոց Լեհաստանի	—	20
Պատմութիւն Հռոմոսի Վանուց ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ	2	—
Պատկերասէր պատկերատեաց	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէօն Կաթուղիկոսի)	—	50
Սաղմոս Դաւթի	—	50
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	20
Տեղեկագիր Ճեմարանի 1881—82.	—	10
Նոյն 1882—83	—	10
Փնար Մշոյ և Վանայ	—	20
Օրացոյց (1890)	—	20
* Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Ստորագրեալ գրեանք հրատարակուած են ուրիշ տեղեր։

20 տոկոսէ աւելի գնողին եւ կանխիկ վճարողին զեղչուին կը լինի 20% ին ճանաչ պարտաւորը գնողի վերայ)։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ԳԵՂԱՐՒԵՍՏԻՔ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

Կազմեց լուսանկաբ Մ. Փափազեանց

Այն մեծածախս ձեռնարկը կարող է մեծ դահլիճների և հայրենասէրների գրատունց համար զարդ լինել:

Այն Ե. Ալբօմը հարուստ է քան Ա. ը, որոյ մէջ պարունակուած էին 17 հատ մեծադիր մաքուր լուսանկար պատկերներ— Գեղարքունեաց հնութիւններից, սոցա անցեալ և ներկայ տեսակութեամբ, մաքուր տպուած և կազմուած. կազմուածի գինն է 10 րբ. անկազմ 9 րբ. 50 կպ. հանդերձ համապարհածախսով:

Յանձնացողները կարող են դիմել Въ Эчміадзинскій типографическій комитетъ. կամ Въ Эчміадзинъ, фотографу М. Папазянцъ.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառւում է բոլոր տպարանական գրավաճառանոցում Սահակ քահ. Սահակեանցի

ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ (Բ. հատոր)

ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար

Նոր—ո–խոփ

նիւթի միակութեան տասմին մասն:

Հասցէն—Центральная книжная Торговля, Тифлисъ և կամ Малая Орбеляновск. Ул. № 26 Սահակ քահանայ Սահակեանցին: